



Protection of Rights
Without Borders NGO

Քննչական կոմիտեի գործունեության ուսումնասիրություն

2022



Սույն հետազոտությունն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Քննչական կոմիտեի գործունեության մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կազմակերպության տեսակետների հետ:

Զեկույցի հեղինակներն են Մարիամ Ղազարյանը և Արաքս Մելքոնյանը:

Բովանդակություն

Ներածություն	5
Մեթոդաբանություն.....	7
ՀՀ քննչական կոմիտեի անձնակազմի ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատումը	9
1. Քննչական կոմիտեի նախագահի ընտրություն և նշանակում	11
2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալների նշանակում	17
3. Քննչական կոմիտեի նախագահին և տեղակալներին պաշտոնից ազատում	18
4. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ընտրությունը և նշանակումը	20
ա) Քննիչների նշանակման գործընթացում ներգրավված մարմինների, ձևավորումը	25
բ) Կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակների համալրումը.....	27
գ) Ուսուցում Արդարադատության ակադեմիայում.....	33
դ) Ատեստավորում և առաջխաղացում.....	39
Քննչական կոմիտեի հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը.....	45
Հաշվետվողականություն	45
1. Ներքին հաշվետվողականություն.....	49
2. Հաշվետվողականություն պետական մարմինների առջև.....	52
3. Հաշվետվողականություն անկախ մարմիններին.....	58
Թափանցիկություն	61
ՀՀ քննչական կոմիտեի կողմից ռեսուրսների ներգրավումը, բյուջետային հայտերի կազմումը.....	65
Բյուջետավորման գործընթացի կարգավորումները ՀՀ-ում և Կոմիտեի բյուջետավորումը	68
Ամփոփիչ եզրահանգումներ.....	77
1. Կոմիտեի ձևավորման, դեկավար կազմի նշանակման և Կոմիտեի ընտրության վերաբերյալ.....	77
2. Կոմիտեի հաշվետվողականության վերաբերյալ	78
3. Կոմիտեի գործունեության թափանցիկության վերաբերյալ.....	79
4. Կոմիտեին անհրաժեշտ ռեսուրսների ներգրավման վերաբերյալ.....	80
Առաջարկություններ.....	81

Օգտագործված հասպավումների ցանկ

ԱԱՕ – ՀՀ օրենքը արդարադատության ակադեմիայի մասին (ընդունված 2013 թվականի մայիսի 2-ին)

ԲԴԽ – ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ

ԵԱՀԿ – Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵՄ – Եվրոպական Միություն

ԽԿԿ – ԵՄ Խոշտանգումների կանխարգելման կոմիտե

Կոմիտե – ՀՀ Քննչական կոմիտե

ՀՔԾ – ՀՀ Հատուկ քննչական ծառայություն

ՄԱԿ – Միավորված Ազգերի Կազմակերպություն

ՄԺԾԾ – Միջնաժամկետ ծախսերի ծրագիր

ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻՊ – ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան

ՆԱՎ – ՀՀ Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչություն

ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՔԴՕ – ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված 1998թ. հուլիսի 1-ին)

ՔԿՕ – ՀՀ օրենքը քննչական կոմիտեի մասին (ընդունված 2014 թվականի մայիսի 19-ին)

DCAF – Geneva Center for Security Sector Governance (Ժնևի՝ անվտանգության հարցերի կառավարման կենտրոն)

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) էական դերակատարում ունի ՀՀ քրեական արդարադատության համակարգում: Այս մարմնի կողմից են քննվում ՀՀ-ում տեղի ունեցած հանցագործությունների մեծամասնության առնչությամբ հարուցված քրեական գործերը, այդ թվում՝ ինչպես մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները, այնպես էլ մինչև ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծումը՝ կոռուպցիոն հանցագործությունները:

Որպես հանցագործություններով նախնական քննություն իրականացնող մարմին՝ Կոմիտեի քննիչների վրա է դրված քրեական գործերով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու պարտականություն: Այս խնդրի կատարման համար էական է քննիչների մասնագիտական պատրաստվածությունը, գործնական կարողությունները, ինքնուրույն քննություն իրականացնելու համար անհրաժեշտ երաշխիքները և Կոմիտեի՝ այլ մարմիններից անկախության երաշխիքները:

Սույն զեկույցը ուսումնասիրում է Կոմիտեի գործունեությունը՝ անդրադառնալով գործունեությանն առնչվող հետևյալ տարրերին. Կոմիտեի ինստիտուցիոնալ անկախություն, մասնավորապես, թե Կոմիտեն՝ որպես պետական մարմին, ինչպիսի հարաբերակցության մեջ է պետական այլ մարմինների հետ, և արդյոք այդ հարաբերակցությունը որևէ ազդեցություն կարող է ունենալ Կոմիտեի անկախության վրա, Կոմիտեի, ներառյալ՝ ղեկավար կազմի ձևավորում, քննիչների ընտրություն և նշանակում: Նշված հարցերի առնչությամբ խնդրահարույց է և լրացուցիչ հետազոտման կարիք ունի մասնավորապես Կոմիտեի ձևավորմանն առնչվող գործող ընթացակարգերի գործողության արդյունքում Կառավարության՝ Կոմիտեի ղեկավար կազմի նկատմամբ ազդեցությունը, ինչը ուղղակի կարող է ազդել կառույցի ինստիտուցիոնալ անկախության վրա: Գործող կարգավորումներում ոչ բավարար որոշակիությունը, ներառյալ՝ ղեկավար կազմի թեկնածուների ընտրման, քննիչների ընտրության ընթացքում գնահատման չափանիշների առնչությամբ, նույնպես ներառվել են հետազոտության շրջանակում:

Այնուհետև, հետազոտությունը անդրադարձել է նաև Կոմիտեի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներին առնչվող հարցերին, որոնց առնչությամբ խնդիրներ բարձրաձայնվել էին տարբեր փորձագետների, գործող փաստաբանների և Կոմիտեի գործունեությանն առնչվող մի շարք այլ մարմինների կողմից: Այս տեսանկյունից ուսումնասիրվել են, թե ինչպես են որոշվում, գնահատվում Կոմիտեի

մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտությունը և իրականացվում դրանց ներգրավումը, և ինչպես է դա անդրադառնում Կոմիտեի աշխատանքի կազմակերպման և իրականացման արդյունավետության վրա և դրա առնչությամբ առկա խնդիրներ:

Վերջապես, ուսումնասիրվել են նաև Կոմիտեի գործունեության թափանցիկությանն ու հաշվետվողականությանը վերաբերող հարցեր. դիտարկվել են ինչպես այդպիսի ներքին, այնպես էլ արտաքին ընթացակարգերը, դրանց արդյունավետությունը Կոմիտեում առկա խնդիրները վերհանելու, դրանց լուծմանն ուղղված հստակ գործողություններ իրականացնելու, այդ գործընթացում շահագրգիռ անձանց/մարմիններին ներգրավելու տեսանկյունից:

Մեթոդաբանություն

Կոմիտեի գործունեության ուսումնասիրությունն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ.

- *Փաստաթղթերի ուսումնասիրություն.*

Ուսումնասիրվել են քննիչների, իրավապահ մարմինների գործունեությանն առնչվող վերը նշված հարցերի վերաբերյալ միջազգային չափանիշները, միջազգային կազմակերպությունների, մարդու իրավունքների միջազգային մարմինների կողմից Կոմիտեի առնչությամբ արված առաջարկությունները, Կոմիտեի և իրավապահ այլ մարմինների գործունեությունը կարգավորող ներպետական օրենսդրությունը:

- *Տեղեկատվության հարցումներ.*

Հարցումներ են ուղարկվել Կոմիտեի տարբեր ստորաբաժանումներ, ստացված տեղեկատվությունն ուսումնասիրվել և վերլուծվել է:

- *Հրապարակային տեղեկատվության ուսումնասիրություն.*

Հավաքագրվել և ուսումնասիրվել է նաև հրապարակայնորեն հասանելի տեղեկությունը Կոմիտեի աշխատանքի տարբեր ուղղությունների և պետական այլ մարմինների հետ համագործակցության մասին (օրինակ՝ հրապարակումներ քննվող հանցագործությունների, Կոմիտեի աշխատանքի բարելավման նպատակով պետական այլ մարմինների հետ անցկացվող քննարկումների, հրապարակումներ Կոմիտեի քննիչների կողմից առանձին հանցագործությունների քննության, դրանց ընթացքի վերաբերյալ):

- *Հարցազրույցների իրականացում.*

Կոմիտեի գործունեության խնդիրների շուրջ հարցազրույցներ են իրականացվել ոլորտի մասնագետների՝ փորձագետների, փաստաբանների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում: Ձեկույցի կազմման համար հնարավոր չի եղել անցկացնել հարցազրույցներ անձամբ Քննչական կոմիտեի ներկայացուցիչների հետ՝ պայմանավորված, ըստ Կոմիտեի, վերաբերելի ողջ տեղեկատվության՝ հանրային աղբյուրներում հասանելի լինելու պայմաններում այդպիսի հանդիպում անցկացնելու անհրաժեշտության բացակայությամբ:

Կոմիտեի ձևավորման և գործունեության կարգավորումները գնահատելիս հաշվի են առնվել նաև հակակոռուպցիոն մարմինների նկատմամբ ընդհանուր ճանաչում գտած սկզբունքները: Միևնույն ժամանակ հակակոռուպցիոն մարմինների նկատմամբ

ընդհանուր ճանաչում գտած սկզբունքները դիտարկվել են ՀՀ-ում ստեղծված¹ Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված իրավասության և երկու մարմինների փոխհարաբերակցության համատեքստում:

¹ Նշենք, որ 2021թ. մարտի 24-ին «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, որի հիման վրա ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

ՀՀ քննչական կոմիտեի անձնակազմի ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատումը

Իրավապահ մարմինների և հատկապես դրանց ղեկավար կազմի նշանակման գործընթացը կարող է էական ազդեցություն ունենալ տվյալ մարմնի գործունեության անկախության վրա: Այս առումով, Կոմիտեի ձևավորումը, այն է՝ Կոմիտեի ղեկավար կազմի (նախագահ, տեղակալներ) նշանակման գործընթացը, Կոմիտեի քննիչների ընտրությունն ու նշանակումը, կարող է էական նշանակություն ունենալ Կոմիտեի անկախությունը գնահատելու տեսանկյունից: Ստորև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումները ներկայացվում են միջազգային և տարածաշրջանային մարմինների կողմից ընդունված սկզբունքների, ինչպես նաև այլ պետություններում առկա կարգավորումների համատեքստում:

Հաշվի առնելով, որ ՀՀ դատաիրավական համակարգում քրեական գործերի նախաքննություն իրականացնող Կոմիտեն հռչակված է որպես անկախ մարմին, ապա համակարգի մաս կազմող այլ անկախ մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին և դատախազությանն առնչվող սկզբունքային կարգավորումներն այնքանով, որքանով դրանք վերաբերելի են, կարող են կիրառվել նաև քրեական գործի նախաքննություն իրականացնող մարմնի նկատմամբ: Դրանով պայմանավորված՝ հետազոտության շրջանակներում որոշ դեպքերում հղում է կատարվում դատավորներին կամ դատախազներին վերաբերող միջազգայնորեն հստակ ձևավորված և լայն ճանաչում ստացած հիմնականում այն սկզբունքներին, որոնք վերաբերում են ծառայության նշանակվելու համար անհրաժեշտ ուսմանը, մասնագիտական և գործնական կարողություններին, բարեվարքության գնահատման չափանիշներին և գործընթացին²:

Կոմիտեի ձևավորման կարգը և գործունեությունը կարգավորող նորմերը ուսումնասիրելիս կարելի է դիտարկել նաև նորաստեղծ Հակակոռուպցիոն կոմիտեի վերաբերյալ համապատասխան կարգավորումները: Սա պայմանավորված է նրանով, որ վերջինս նույնպես հիմնվել է որպես քրեական գործերով քննություն իրականացնող անկախ մարմին, ուստի որոշակի կարգավորումները, որոնք օրենսդիրը դիտարկում է որպես անկախության երաշխիքներ, նախընտրելի կլինի կիրառել նաև Կոմիտեի նկատմամբ: Սույնով պայմանավորված՝ Կոմիտեի

²ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, ՄՄԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իմպլեմենտացիայի օրենսդրական ուղեցույց (2006), էջեր 34-36 (https://www.unodc.org/pdf/corruption/CoC_LegislativeGuide.pdf):

ձևավորման կարգն ու գործունեությունը կարգավորող նորմերն ուսումնասիրելիս և հնարավոր խնդիրները վերհանելիս հաշվի են առնվելու նաև հակակոռուպցիոն մարմինների նկատմամբ ընդհանուր ճանաչում գտած սկզբունքները այնքանով, որքանով դրանք կարող են վերաբերելի լինել Կոմիտեին՝ որպես անկախ քննչական մարմնի: Հակակոռուպցիոն կոմիտեն, որը ստեղծվել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության և հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում, կոռուպցիոն հանցագործությունների հետաքննության և նախաքննության կազմակերպման և իրականացման իրավասու պետական մարմին է:³ Նշենք, որ 2021թ. մարտ ամսին «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից, որի հիման վրա ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:⁴ Հակակոռուպցիոն քննչական մարմին ստեղծելու անհրաժեշտությունը հիմնավորվում է կոռուպցիոն հանցագործությունների քննությունը մեկ մարմնի կողմից իրականացվելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով այն խնդիրը, որ այդ գործառույթն իրականացնում էին Կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ), ՀՀ ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները, մինչդեռ ըստ օրենքի հեղինակների՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը կարող է երաշխավորված լինել միայն այն պարագայում, երբ այդ գործառույթը վերապահված է մեկ մասնագիտացված մարմնի՝ այդպիսով ապահովելով միասնական չափանիշներով քննության կազմակերպումը: Նպատակ հետապնդելով ստեղծել կոռուպցիոն հանցագործություններ քննող անկախ մարմին՝ առանձին ուշադրություն է հատկացվում դրա անկախության երաշխիքների ապահովմանը ինչպես ղեկավար կազմի, այնպես էլ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների նշանակման այնպիսի կարգավորումների սահմանմանը, որը առավելագույնս կապահովի վերջիններիս և ամբողջ մարմնի անկախությունը: Այսպիսով, Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթները ներառում են ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով նախնական քննությունը (Հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայության տակ գտնվող հանցագործությունների ցանկը սահմանված է ՀՀ Քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով) և օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը:

³<https://www.e-draft.am/projects/2256/justification>

⁴http://www.parliament.am/draft_history.php?id=12067<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12067&Reading=1>

1. Քննչական կոմիտեի նախագահի ընտրություն և նշանակում

Կոմիտեի ղեկավար կազմի ընտրության և նշանակման կարգն ուսումնասիրելիս դիտարկման են ենթակա հետևյալ հարցերը.

- Կոմիտեի նախագահի ընտրության/նշանակման լիազորություն ունեցող մարմինները,
- Կոմիտեի նախագահի տեղակալների նշանակման լիազորություն ունեցող մարմինը,
- Կոմիտեի ղեկավար կազմի ընտրության համար ուղենիշ հանդիսացող չափանիշները և ընտրությունը/նշանակումը դրանց համապատասխան իրականացնելը,
- Կոմիտեի անկախությունը ղեկավար կազմի նշանակման համատեքստում:

Իրավապահ մարմինների ղեկավար կազմի ընտրության համար համընդհանուր ճանաչում ստացած մեկ մոդել առկա չէ, և միանշանակ մոտեցում չկա առ այն, թե իշխանության որ ճյուղի կողմից պետք է կատարվի նշանակումը՝ օրենսդրի, թե գործադիրի:⁵ Կարևոր է, որ նշանակումը վայելի հանրային վստահություն և հարգանք դատական համակարգի կողմից, ինչը երաշխավորելու նպատակով ընտրության/նշանակման գործընթացը պետք է ունենա մասնագիտական, ոչ քաղաքականացված ուղղվածություն, և կարող է ապահովվել նաև հատուկ հանձնաժողովների ձևավորման միջոցով⁶:

Կառավարության կողմից իրավապահ մարմնի ղեկավարի նշանակումը ինքնին չի վկայում դրա անկախության վրա ազդեցության մասին, եթե առկա են անկախության այլ երաշխիքներ: Ավելին, թեև հնարավոր է, որ ղեկավարի նշանակումը լինի քաղաքական նշանակում, սակայն եթե տվյալ իրավապահ մարմնի ղեկավարի նշանակումը կախված է գործադիր մարմնից, ապա կարևոր է, որ ընտրման ձևը լինի այնպիսին, որ արժանանա հանրության, ինչպես նաև դատական համակարգի, իրավապահ մարմինների համակարգի կողմից վստահության⁷:

Քննչական մարմնի ղեկավար կազմի ձևավորման կարգավորումն ամեն դեպքում պետք է ուղղված լինի ընտրելու/նշանակելու այնպիսի անձանց, որոնք բավարարում

⁵Վրաստանի Սահմանադրության վերանայված նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիք (CDL-AD(2017)013), § 83 ([https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2017\)013-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)013-e)):

⁶«Դատական համակարգի անկախությանն առնչվող եվրոպական չափանիշների մասին գեկույց, մաս II – Դատախազական ծառայությունը», Վենետիկի հանձնաժողով (CDL-AD(2010)040), §§34-35 ([https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2010\)040-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2010)040-e)):

⁷ԵՄ Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի կարծիք No 9 (2014), կետ 56 (<https://rm.coe.int/168074738b>):

են անկախության երաշխիք հանդիսացող մի շարք չափանիշների: Այդ չափանիշների թվում կարևորվում են ապաքաղաքականացվածությունը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և ձեռնհասությունը:⁸ Մի շարք համակարգերում նշված չափանիշները բավարարելու նպատակով նշանակումներ կատարում են բաց, թափանցիկ, մրցակցային և մասնակցության լայն հնարավորություն ապահովող ընթացակարգերի միջոցով:⁹ Ավելին, որպես երաշխիք առ այն, որ ղեկավար անձը իր պաշտոնավարման ողջ ընթացքում կցուցաբերի անկողմնակալություն, բարեվարքություն և չեզոքություն, նախընտրելի է նշանակման և ընտրության այնպիսի համակարգ, որը պահանջում է քաղաքական լայն շրջանակի կողմից աջակցություն, իսկ տվյալ անձի թեկնածությունը պետք է առաջարկվի և/կամ հաստատվի իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից:¹⁰ Ընդդիմադիր ուժերի ներգրավվածությունը ղեկավարի ընտրությանը ուժեղացնում է գործընթացի օբյեկտիվությունը և անկողմնակալությունը՝ նվազեցնելով ընտրվող անձի՝ իշխող մեծամասնության օգտին կողմնակալություն դրսևորելու հավանականությունը:¹¹ Այսպիսի ներգրավվածություն ապահովելու համար ողջամիտ մոտեցում է այդ մարմինների ղեկավարների վերջնական նշանակումը պառլամենտի, այլ ոչ թե այլ մարմնի կողմից՝¹² հաշվի առնելով, որ պառլամենտում հնարավոր կլինի հրապարակային ձևաչափով տարբեր ուժերի միջև անցկացնել քննարկումներ և նշանակման վերաբերյալ վերջնական որոշման կայացմանը մասնակից դարձնել այդ տարբեր ուժերին՝ նվազեցնելով քաղաքական մեկ ուժի կողմից նշանակման հնարավորությունը, և դրանով պայմանավորված՝ կախվածությունը այդ ուժից: Ինչպես արդեն նշվեց, իրավապահ մարմինների, ներառյալ՝ քննչական մարմինների ղեկավարների նշանակման մեկ ընդհանուր մոդել առկա չէ, և առանձին երկրների

⁸ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, Կոլումբոյի մեկնաբանությունները Ձևակարտայի սկզբունքների արձանագրություն հակակոռուպցիոն մարմինների համար (2012) (այսուհետև՝ **Կոլումբոյի մեկնաբանություններ**), էջեր 23-30 (https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/20-00107_Colombo_Commentary_Ebook.pdf):

⁹*Օրինակ*՝ Լատվիայում ընտրվում են բաց նշանակման համակարգի միջոցով. թեկնածուները պետք է դիմում ներկայացնեն, որը գնահատվում է սահմանված չափանիշների համատեքստում: Այնուհետև հարցաքննվում են մի խումբ փորձագետների կողմից: Այնուհետև թեկնածուները հարցաքննվում են նախարարների կոմիտեի կողմից, որն էլ վերջնական եզրակացություն է ուղարկում Պառլամենտին: Մերբիայում՝ ազատ մրցույթ, այնուհետև ձևավորվում է խորհրդատվական հանձնաժողով (օրինակները՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ» ձեռնարկից (էջ 29), Կոլումբոյի մեկնաբանություններից):

¹⁰Կոլումբոյի մեկնաբանություններ, էջ 29 (https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/20-00107_Colombo_Commentary_Ebook.pdf):

¹¹Կոլումբոյի մեկնաբանություններ, էջ 29 (https://www.unodc.org/documents/corruption/Publications/2020/20-00107_Colombo_Commentary_Ebook.pdf):

¹²Վենետիկի հանձնաժողով, կարծիք թիվ Opinion No. 937 / 2018, § 19 ([https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2018\)029-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2018)029-e)):

կարգավորումները վերլուծելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նշանակման կարգի, առկա հակակշիռների և կոնկրետ նշանակման գործընթացի՝ գործերի քննության վրա ունեցած հնարավոր ազդեցության և դրանով պայմանավորված՝ տվյալ իրավապահ մարմնի արդյունավետության տեսանկյունից: Այս հարցերին որոշ չափով անդրադարձել են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մարմինները, որոնց՝ առանձին երկրների վերաբերյալ արված եզրակացություններից կարելի է դուրս բերել որոշակի սկզբունքներ:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ շատ երկրներում, հատկապես խորհրդարանական կառավարման կարգ ունեցող, քրեական գործի քննության իրավասություն ունեցող մարմինների ղեկավարները նշանակվում են Կառավարության կողմից, և դա ինքնին խնդրահարույց չէ:¹³ Այս առնչությամբ, չնայած իրավապահ մարմինների ղեկավար պաշտոնների նշանակումների հարցում քաղաքական մարմինների ներգրավվածության հնարավորությանը՝ նույնը վերաբերելի չի կարող լինել համակարգի մյուս ծառայողներին:¹⁴

Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Չեխիայի դեմ գործի շրջանակներում անդրադարձել է Չեխիայում ոստիկանների դեմ գործերով քննություն իրականացնող մարմնի՝ Ոստիկանական Տեսչության (Police Inspectorate) անկախությանը: Այդ մարմնի ղեկավարը Չեխիայում նշանակվում և պաշտոնից ազատվում է Կառավարության կողմից, իսկ մյուս անդամները կազմում են Ներքին գործերի նախարարության կողմից նշանակված ոստիկաններ: Դատարանը, հատկապես ընդգծելով քննություն իրականացնող պաշտոնյաների՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն Ներքին գործերի նախարարից կախված լինելը, քննություն իրականացնող ոստիկանական մարմնի ղեկավարի՝ Ներքին գործերի նախարարին հաշվետու լինելը՝ նշել է, որ այդ հանգամանքներով պայմանավորված՝ առկա են կասկածներ քննություն իրականացնող անձանց անկախության կամ վերադասների

¹³Օրինակ՝ Գերմանիայում ֆեդերալ մակարդակում գործում է Ֆեդերալ Քրեական Ոստիկանությունը (Bundeskriminalamt), որը ղեկավարվում է նախագահի (*Präsident des Bundeskriminalamtes*) և երկու տեղակալների կողմից (*Vizepräsident beim Bundeskriminalamt*): Կառույցի նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Ներքին գործերի նախարարությունը: Նախագահը նշանակվում է Գերմանիայի նախագահի կողմից՝ Ներքին գործերի նախարարի առաջարկությամբ: Կամ, Իտալիայում քրեական գործերով քննություն իրականացնելու իրավասություն ունի ոստիկանությունը: Ոստիկանության ղեկավարը նշանակվում է Նախարարների կոմիտեի (գործադիր մարմին) կողմից: Իտալիայում քրեական գործով քննություն իրականացնող մարմիններից են Կարաբինիերական գործերը, որի հրամանատարը նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից՝ ներքին գործերի նախարարի առաջարկությամբ՝ Նախարարների կոմիտեի քննարկումներից հետո:

¹⁴ՄԱԿ-ի Թվրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, *Ոստիկանական համակարգի պատասխանատվության, դրա վերահսկողության և բարեկարգության վերաբերյալ զեկույց* (2011) (այսուհետ՝ Ոստիկանական համակարգի պատասխանատվության մասին զեկույց) էջ 100 (https://www.unodc.org/pdf/criminal_justice/Handbook_on_police_Accountability_Oversight_and_Integrity.pdf)

կողմից ճնշումների ենթակա լինելու առումով՝ անկախ նրանից, թե գործի նյութերում իրականում առկա է կանխակալության որևէ դրսևորում, թե ոչ:¹⁵

Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը անդրադարձել է Չեխիայի Ոստիկանական տեսչության ղեկավարի նշանակմանը: Ըստ Դատարանի՝ այն հանգամանքը, որ ղեկավարը նշանակվում էր Կառավարության կողմից և հաշվետու էր վերջինիս, այլ ոչ թե Ներքին Գործերի նախարարությանը, թեև բարձրացնում է տվյալ մարմնի անկախությունը, սակայն միանշանակ չի վկայում անկախության մասին՝ հատկապես հաշվի առնելով այն, որ տեսչության ծառայողները մնում էին ենթակա ներքին գործերի նախարարությանը: Այս հանգամանքներում անգամ անկախ դատախազության կողմից հսկողությունը չի կարող երաշխավորել քննության անկախությունը:¹⁶

Լատվիայի վերաբերյալ եզրահանգումներում Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն կարևորել է այն, որ քննությունն իրականացնող մարմինը (Ներքին անվտանգության բյուրոն) թեև կապված էր գործադրին (այն է՝ Ներքին գործերի նախարարությանը), բյուրոյի ղեկավարը ներքին գործերի նախարարի առաջարկությամբ նշանակվում է կառավարության կողմից, սակայն այն, ըստ էության, անկախ է, այդ թվում՝ նաև ոստիկանությունից, որոնց անդամների դեմ քրեական գործերի քննության լիազորություն ունի Ներքին անվտանգության բյուրոն:

ՀՀ-ում Կոմիտեի նախագահի նշանակման գործող կարգը սահմանվել է 2015թ. Սահմանադրական փոփոխություններից հետո: Պառլամենտական կառավարման ձևի անցնելուց հետո սահմանվել է, որ Կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով, մինչդեռ, ինչպես նշվեց, նախկինում այդ իրավասությունը վերապահված էր Հայաստանի Հանրապետության Նախագահին, ով Կոմիտեի նախագահին նշանակում էր Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ: Պետք է նշել, որ նշյալ փոփոխությունների հիմքում դրված միակ հիմնավորումը եղել է նոր Սահմանադրությամբ ՀՀ նախագահի՝ այդպիսի նշանակում կատարելու լիազորության բացակայությունը, որով պայմանավորված՝ անհրաժեշտ է եղել օրենքից հանել Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ Սահմանադրությամբ չնախատեսված լիազորություններ ամրագրող դրույթները:¹⁷

¹⁵ՄԻԵԴ, *Երեմիասովան և Պեչովան ընդդեմ Չեխիայի (Eremiasova and Pechova v. The Czech Republic)* գործով ՄԻԵԴ վճիռը, no. [23944/04](#) (16 փետրվարի 2012), §§ 58, 154:

¹⁶ ՄԻԵԴ, *Կումմերն ընդդեմ Չեխիայի (Kummer v. The Czech Republic)*, no. [32133/11](#) (25 հուլիս 2013), §§ 85-87:

¹⁷<https://www.e-draft.am/projects/668/justification>

Համեմատական տանելով ՀՀ իրավական համակարգում անկախ հռչակված այլ մարմնի, մասնավորապես՝ նախկինում գործող ՀՔԾ ղեկավարի նշանակման ընթացակարգի հետ՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետության առնչությամբ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն անդրադարձել է ՀՔԾ ղեկավար կազմի նշանակմանը, և ի կատարումն ՀՀ իշխանություններին ուղղված՝ քննություն իրականացնող անկախ մարմին ստեղծելու պահանջի, ԽԿԿ-ն ընդունել է այն մոդելը, որ ՀՔԾ-ի պետը նշանակվում է ՀՀ նախագահի կողմից:¹⁸

Պետք է նշել, որ ՀՀ-ի դեմ մի շարք որոշումներով ՄԻԵԴ-ը գտել է, որ չի իրականացվել գործի այնպիսի քննություն, որը կապահովեր քննության անկախությունն ու անկողմնակալությունը, ինչի արդյունքում գտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների խախտում:¹⁹ ՄԻԵԴ-ի վճիռների կատարման գործընթացում որպես արդեն իսկ անկախ քննություն ապահովող մարմին ՀՀ իշխանությունների կողմից ներկայացվել է 2014թ. ստեղծված Կոմիտեն, ինչը համակարգային և կառուցվածքային առումով դիտարկվել է որպես անկախ մարմին:²⁰ ԵՖ Նախարարների կոմիտեն հատկապես մատնանշել է համակարգային բարեփոխումները՝ ուղղված քննության անկախության ու արագության երաշխավորմանը, ինչպես նաև քննությանը տուժողների ներգրավման ապահովմանը՝ բարեփոխումների թվում նշելով նաև Կոմիտեի ստեղծումը, սակայն մինևույն ժամանակ իշխանություններին խրախուսելով հաշվի առնել մարդու իրավունքների ազգային և միջազգային մարմինների կողմից գործականում այս փոփոխությունները իրականացնելու վերաբերյալ արտահայտված մտահոգությունները:²¹

Այս տեսանկյունից ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության կարգի ուսումնասիրությունը ևս ուշադրության է արժանի: Այսպես, թեև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի վերջնական նշանակումը կրկին, ինչպես Կոմիտեի դեպքում,

¹⁸ԽԿԿ գեկույցը ՀՀ այցի մասին, 2015թ. հոկտեմբերի 5-15 <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-arm-20151005-en>: Սակայն պետք է հաշվի առնել, որ այդ դիտարկումները վերաբերում են նշանակման նախկին կարգին, և հետագա գործերով ՀՔԾ-ի կամ Կոմիտեի ղեկավարների նշանակման կարգին անդրադարձ չի կատարվել ԽԿԿ-ի կողմից: Անհրաժեշտ է փաստել, որ ԽԿԿ գեկույցը վերաբերել է մինչև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կատարումը նախագահի լիազորություններին:

¹⁹Տես, օրինակ, ՄԻԵԴ, *Նալբանդյանի ընդդեմ Հայաստանի (Nalbandyan and others v. Armenia)*, nos. 9935/06 և 23339/06 (31 մարտի 2015) § 123; ՄԻԵԴ *Չալյանը և այլք ընդդեմ Հայաստանի (Zalyan and others v. Armenia)*, nos. 36894/04 և 3521/07 (17 մարտի 2016), § 274:

²⁰Տես, օրինակ, *Չալյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով վճիռի կատարումը (<http://hudoc.exec.coe.int/eng?i=004-377>):

²¹Տես, օրինակ, *Մուրադյանի ընդդեմ Հայաստանի* գործով վճիռի կատարումը (<http://hudoc.exec.coe.int/eng?i=004-46287>):

իրականացնում է ՀՀ վարչապետը, ապա Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորվում է հատուկ մրցութային խորհուրդ: Խորհուրդը կազմված է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած մեկական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչներից: Միննույն ժամանակ հստակ չափանիշներ են սահմանվում խորհրդի անդամների համար:²² Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով Կառավարության սահմանած կարգով ներգրավվում է մինչև երեք միջազգային փորձագետ:²³

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համար, ի լրումն Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ներկայացվող պահանջների²⁴, նախատեսվում է գործունեության պահանջ, այն է՝ քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ դատավորի, դատախազի, քննիչ կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ:²⁵

Այսպիսով, ի տարբերություն Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության և նշանակման ընթացակարգի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության հայեցողությունը անսահմանափակ չէ, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը պարտավորված է գործունեության մասին տարեկան հաղորդում ներկայացնել ոչ միայն Կառավարություն, այլև Ազգային ժողով:²⁶

²²«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք, հոդված 18, մաս 3, ըստ որի՝ խորհրդի անդամ, բացառությամբ քաղաքացիական հասարակության ներկայացուցչի, կարող է նշանակվել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան ունեցող, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող, կուսակցական պատկանելիություն չունեցող յուրաքանչյուր ոք, որն ունի քրեական մասնագիտացման դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերլիազորի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն հինգ տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ:

²³«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք, հոդված 48, մաս 5:

²⁴«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք, հոդված 15:

²⁵«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք, հոդված 16, մաս 1:

²⁶«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենք, հոդված 7, մաս 2:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման կարգը՝ արժանի է դիտարկման նաև ՀՀ ազգային ժողովի՝ Կոմիտեի նախագահի ընտրության գործընթացում առավել բարձր ներգրավվածությունը, ինչն իր հերթին գործընթացին կհաղորդի վերահսկողության լրացուցիչ հնարավորություն և թափանցիկություն:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ փաստենք, որ Կոմիտեի նախագահի նշանակման ընթացակարգը վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո ուսումնասիրելիս կարելի է եզրակացնել, որ գործընթացը չի երաշխավորում թեկնածուների, հատկապես Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրման և ընտրված անձանց շրջանակից նշանակման ընթացակարգի թափանցիկություն: Պարզ չէ՝ ինչ սկզբունքով են ընտրվում և Կառավարության քննարկմանը ներկայացվում Կոմիտեի նախագահի թեկնածուները, թեկնածուների շրջանակից ինչպես է ընտրվում ամենահամապատասխան թեկնածուն և ինչ չափանիշներ են հաշվի առնվում ընտրություն կատարելու համար, ներառյալ՝ մասնագիտական կարողություններ և անձնական արժանիքներ:

2. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալների նշանակում

Ինչ վերաբերում է ընդհանրապես քննչական մարմնի ղեկավարի տեղակալների նշանակմանը, ապա այս տեսանկյունից խնդրահարույց կարող է լինել այն, երբ նրանց նշանակումը վերապահված է բացառապես տվյալ մարմնի ղեկավարին, ինչը կարող է հանգեցնել նրան, որ տեղակալներ նշանակվեն ոչ անկախ անձինք:²⁷ Հետևաբար, նշանակման գործընթացում պետք է որևէ կերպ ներգրավված լինեն նաև այլ մարմիններ, որոնց միջոցով կգնահատվի թեկնածուի՝ պահանջվող չափանիշներին համապատասխանությունը:

ՀՀ քննչական կոմիտեի մասին օրենքի համաձայն՝ *Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ նշանակում է վարչապետը*: Կոմիտեի նախագահի տեղակալների համար բացի քննիչների համար

²⁷Մոնտենեգրոյի Սահմանադրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիք թիվ CDL-AD(2007)047, Opinion on the Constitution of Montenegro, §§108-109 ([https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2007\)047-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2007)047-e)):

սահմանված ընդհանուր պահանջներից այլ լրացուցիչ պահանջներ սահմանված չեն:²⁸

3. Քննչական կոմիտեի նախագահին և տեղակալներին պաշտոնից ազատում

Իրավապահ մարմինների աշխատակիցներին պաշտոնից ազատելու գործընթացը պետք է ապահովված լինի իրավական երաշխիքներով՝ բացառելու կամայական ազատումները և դրանց միջոցով իրավապահ մարմնի աշխատակիցների գործողությունների ուղորդումը, նրանց վրա ազդեցությունը: Ցանկացած դեպքում պաշտոնից ազատումը չի կարող լինել կամայական: Պաշտոնից ազատման հիմքերը պետք է հստակ սահմանված լինեն համապատասխան իրավական փաստաթղթերով, որոնցով կարգավորվում է տվյալ մարմնի գործունեությունը: Դրանք կարող են ներառել իրավախախտում, անձեռնհասություն, և այլն:²⁹ Պետք է ապահովված լինի այնպիսի բազմաշերտ ընթացակարգ, որի միջոցով պաշտոնից ազատման համար հիմք հանդիսացող արարքի մեջ մեղադրվող անձը պատճառաբանություններ ներկայացնելու հնարավորություն ունենա, և որին ներգրավված կլինեն ներկայացուցիչներ ինչպես տվյալ մարմնի, այնպես էլ իշխանության այլ ճյուղերից, օրինակ՝ օրենսդիր, դատական մարմիններ, վերահսկողական հանձնաժողովներ և այլն: Ինչ վերաբերում է ազատման համար հիմքերին, ապա դրանց հիմքում պետք է դրվեն բավարար ապացույցներ և հիմնավորումներ՝ նվազեցնելու պաշտոնից ազատման քողարկման ներքո տարբեր այլ նպատակներով ղեկավար կազմի թիրախավորման հնարավորությունը:

Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների՝ պաշտոնից ազատման իրավասությունը վերապահված է նույն մարմնին, որը նշանակել է տվյալ պաշտոնյային, այն է՝ համապատասխանաբար Կառավարությանը և վարչապետին, իսկ պաշտոնից ազատման հիմքերը սահմանված են Քննչական կոմիտեի մասին ՀՀ օրենքի (հետայսու՝ ՔԿԾ) 22-րդ հոդվածով:

²⁸Կրկին կարող ենք համեմատել ձևավորվելիք Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների համար օրենքի նախագծով սահմանված պահանջների հետ, որոնք են, ի լրումն ընդհանուր պահանջների, նաև քննչական մարմնի բարձրագույն, գլխավոր խմբերի կամ դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերիվագորի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն 4 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 4 տարվա ընդհանուր ստաժ: Այսպիսի չափանիշների սահմանումը որոշակիություն է ապահովում հնարավոր թեկնածուների շարքում՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով չհիմնավորված նշանակումները:

²⁹Կոլտմբոյի մեկնաբանություններ, Էջ 33:

ՔԿՕ օրենքով պաշտոնից ազատման հիմքերից խնդրահարույց կարող են լինել.

- հաստիքների կրճատման արդյունքում ազատումը (ՔԿՕ 22-րդ հոդված, մաս 1, կետ 4), եթե հստակ մոտեցում և չափանիշներ առկա չեն, թե ինչ սկզբունքով է որոշվում այլ պաշտոնի նշանակման անհնարինությունը և ազատման ենթակա աշխատակիցների հերթականությունը,
- կարգապահական տույժի կիրառման արդյունքում ազատումը (ՔԿՕ 22-րդ հոդված, մաս 2, կետ 1), երբ առկա է ոչ միանշանակ մոտեցում օրենքի իմաստով կարգապահական խախտման համար հիմք հանդիսացող «կոպիտ խախտում» հասկացության մեկնաբանությանը և որոշակի տեսակի խախտումների համար պաշտոնից ազատում տույժի կիրառմանը:

4. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ընտրությունը և նշանակումը

Քննիչների³⁰ ընտրության և նշանակման վերաբերյալ կարգավորումները դիտարկման են ենթակա հետևյալ հարցերի համատեքստում.

- իրավապահ մարմինների ընտրության վերաբերյալ առկա միջազգային ընդհանուր չափանիշները,
- քննիչների ընտրության՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված չափանիշների օբյեկտիվությունն ու հստակությունը,
- քննիչների ընտրության իրավասություն ունեցող մարմինների կարգավիճակն ու գործունեության անկախության երաշխիքները,
- քննիչների նշանակման գործընթացում պետական այլ մարմինների ներգրավվածությունը,
- քննիչների նշանակման գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
- նշանակման որոշումների բողոքարկման հնարավորությունը:

Իրավապահ մարմիններին առնչվող՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից համակարգված չափանիշների համաձայն՝ պետությունները պետք է սահմանեն իրավապահ մարմինների ծառայողներին ներկայացվող պահանջներ, ապահովեն սահմանված չափանիշներին համապատասխանող անձանց կողմից իրավապահ գործունեության իրականացումը:³¹ Պետությունները պետք է ապահովեն, որ իրավապահ բոլոր մարմիններում ծառայության նշանակման համար առկա լինեն գնահատման և ընտրության պատշաճ ընթացակարգեր, որ այդ մարմիններում ծառայողները իրենց

³⁰ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» օրենքը ներկայումս օգտագործվում է «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» եզրույթը, որը սահմանվում է որպես «քննչական կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների պետերը և նրանց տեղակալները, բաժնի պետերը, բաժնի պետի տեղակալները, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները և քննիչները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված հիմքերով քննչական կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող ծառայողները, որոնք «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում են ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք»: Սույն զեկույցը շրջանակերում «քննիչ» եզրույթը օգտագործվում է «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» իմաստով՝ ենթադրելով քննչական գործառնություններ իրականացնող պաշտոնատար անձ: Այն դեպքերում, երբ քննարկվում են «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» ղեկավար կազմին առնչվող հարցեր և կարգավորումներ, ապա օգտագործվում է համապատասխան ղեկավար պաշտոնի անվանումը, այն է՝ Կոմիտեի նախագահ, նախագահի տեղակալ և այլն:

³¹ Իրավապահ մարմինների վարքագծի կանոններ (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձև թիվ 34/169) https://www.unodc.org/pdf/compendium/compendium_2006_part_04_01.pdf

գործառույթներն իրականացնելու համար օժտված լինեն պատշաճ բարոյական, հոգեկան և ֆիզիկական հատկանիշներով և ստանան շարունակական և համապարփակ մասնագիտական վերապատրաստումներ:³² Ընտրման գործընթացում պետք է առկա լինեն կանխակալությունը բացառող երաշխիքներ:³³ Ինչ վերաբերում է ծառայությանը ներգրավման ընթացակարգին, իրավապահ մարմիններում ծառայության անցնելու մասին տեղեկությունները պետք է լինեն հրապարակային:³⁴ Ընտրությունը պետք է լինի թափանցիկ և արդար, ընտրության չափանիշները պետք է լինեն նախապես սահմանված և ուղղված լինեն ներգրավելու բարձր որակական հատկանիշներ ունեցող անձանց՝ վերջիններիս ունեցած գիտելիքների և ոչ քաղաքական կամ էթնիկ պատկանելիության հիման վրա:³⁵

Քննիչների ընտրության գործընթացը պետք է նպաստի քննչական համակարգում ձևավորված արժեքային համակարգի ամրապնդմանը, ինչն ապահովելու նպատակով քննիչների ընտրության, հետագայում նրանց գնահատման գործընթացը պետք է ուղղված լինի նաև պարզելու քննիչների հարգանքը օրենքի, գործող կարգավորումների նկատմամբ: Արժեքային համակարգի տարրեր կարող են համարվել հավատարմությունը, բարեվարքությունը, պատասխանատվությունը, անկողմնակալությունը, թափանցիկությունը, մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը:³⁶

Քննիչների նշանակման գործընթացում կարևոր տեղ պետք է զբաղեցնի *բարեվարքությանն* առնչվող հատկանիշների գնահատումը: Բարեվարքության գնահատումն ուղղված է վեր հանելու հնարավոր կոռուպցիոն գործողություններում ներգրավվածությունը, այդպիսի ներգրավվածության հավանականությունը,³⁷ տվյալ

³²ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, *Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքներ* (1990), § 18

(<https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/useofforceandfirearms.aspx>):

³³ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, *Ղատախազների դերի մասին ուղեցույց*, § 2 (<https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/RoleOfProsecutors.aspx>):

³⁴Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջ 80

(https://www.unodc.org/pdf/criminal_justice/Handbook_on_police_Accountability_Oversight_and_Integrity.pdf):

³⁵Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ 2011), էջ 80

(https://www.unodc.org/pdf/criminal_justice/Handbook_on_police_Accountability_Oversight_and_Integrity.pdf):

³⁶DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջեր 66-70

(https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/DCAF_PIBP_Toolkit_ENG_2019_web.pdf):

³⁷DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), «բարեվարքության ստուգում» հասկացության սահմանումը, էջ 308:

պաշտոնատար անձի կողմից կոռուպցիոն տարրեր ենթադրող իրավիճակներում կոռուպցիայի չտրվելու կարողությունը:³⁸

Կարևոր են նաև *հոգեբանական թեստերը* ինչպես քննիչների պաշտոնի նշանակման գործընթացի ընթացքում, այնպես էլ հետագայում: Հոգեբանական թեստերը պետք է ուղղված լինեն բացահայտելու այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բռնության հակումը, անազնվությունը և այլն, իսկ արժեքային համակարգին վերաբերող թեստերն առնչվում են էթիկային, վարքագծի կանոններին:³⁹ Հոգեբանական թեստերը կարող են ներառել, օրինակ, լարված պայմաններում որոշում կայացնելու ունակության, ինտելեկտի, թիմում աշխատելու կարողությունների ստուգում և այլն:

Հետևաբար, արդյունավետ քննչական համակարգ ձևավորելու համար պետք է գնահատվեն ոչ միայն գործող օրենսդրության իմացությունը, գործնական ունակությունները փաստաթղթային եղանակով, այլև թեկնածուի և քննիչի անձնական հատկանիշները, հոգեբանական պատրաստվածությունը, վերաբերմունքը էթիկայի հիմնարար նորմերի նկատմամբ: Ստորև ներկայացված՝ քննիչների նշանակման վերաբերյալ ՀՀ ներպետական կարգավորումներից բխում է, որ Կոմիտեում քննիչների ներգրավման գործընթացում չեն օգտագործվում այնպիսի ընթացակարգեր, որոնցով կիրականացվեն բարեվարքության գնահատում և/կամ հոգեբանական թեստեր տվյալ անձի նկատմամբ, իսկ գործող կարգավորումները թեկնածուների համապատասխանության և դրանց գնահատման չափանիշների տեսանկյունից չեն ապահովում անհրաժեշտ բոլոր հատկանիշների և արժանիքների գնահատում:

Քննչական կոմիտեի քննիչների ընտրությունը ՀՀ-ում

Այսպես, ՀՀ-ում Կոմիտեի քննիչների ընտրության կարգը, քննիչներին ներկայացվող պահանջները կարգավորվում են «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով և «ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2019թ. դեկտեմբերի 4-ի թիվ 153-Լ հրամանի⁴⁰ (ինկորպորացված տարբերակ 2014 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ

³⁸ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ, *ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 11-րդ հոդվածի մեկնաբանման ուղեցույց* (2015), էջ 11:

(https://www.unodc.org/documents/corruption/Publications/2014/Implementation_Guide_and_Evaluative_Framework_for_Article11-English.pdf)

³⁹DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջ 63-70:

⁴⁰<https://www.investigative.am/news/view/pastatxter-vorakavorman-karg-hraman.html>

18-Լ հրամանի) և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով: Ընտրման գործընթացում որպես քննիչների նշանակման գործընթացում ներգրավված մարմիններ՝ հանդես են գալիս Կոմիտեի որակավորման հանձնաժողովը, Արդարադատության ակադեմիայի գնահատման և բողոքարկման հանձնաժողովները, որոնց անկախությունը և գործունեության ընթացքում անաչառությունը էական ազդեցություն ունեն Կոմիտեի ձևավորման, դրա անկախության վրա:

ՀՀ-ում քննչական ծառայության անցնելու գործընթացը կազմված է հետևյալ փուլերից.

(1) Կոմիտե հայտի ներկայացում,

(2) Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտ ներկայացրած անձի որակավորման ստուգում, ինչն իրականացվում է փաստաթղթերի ստուգման, գրավոր քննության և հարցազրույցի անցկացման փուլերի միջոցով,

(3) Արդարադատության ակադեմիայում ուսումնառություն,

(4) Արդարադատության ակադեմիայի առարկայական կուրսի արդյունքների գնահատում,

(5) Կոմիտեի նախագահի կողմից քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից քննիչների նշանակում, որոնք ավարտել են Արդարադատության ակադեմիայում ուսումը և հաջողությամբ հանձնել որակավորման քննությունը կամ ազատված են եղել Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից:

Այսպես, ՔԿՕ համաձայն՝ Կոմիտեում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանում դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի) կամ պահեստազորի սպա է.

2) տիրապետում է հայերենին.

3) չունի Քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն (որոնց ցանկը սահմանում է Կառավարությունը).

4) ընդգրկվել է Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում: (ՔԿՕ, Հոդված 17, մաս 1):

Ստացվում է, որ օրենքով սահմանված՝ քննիչներին ներկայացվող նվազագույն չափանիշները չեն ներառում, օրինակ, որոշակի աշխատանքային փորձ կամ իրավապահ այլ մարմիններում ծառայած լինելու անհրաժեշտություն: Ավելին, օրենքը ոչ միայն չի սահմանում աշխատանքային փորձի հստակ պահանջ, այլև որոշակի փորձառության առկայությունը դիտարկվում է որպես Արդարադատության սկադեմիայում ուսումնառությունից ազատման հիմք: Մասնավորապես՝ անձն ազատվում է ուսումնառությունից, եթե (1) ունի դատախազի, դատավորի, քննիչի, հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի կամ (2) իրավաբանական գիտությունների դոկտոր է կամ (3) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ: Այս խմբերում գտնվող անձանց միջնորդությամբ որակավորման հանձնաժողովը կարող է քննության առնել նրանց միաժամանակ Կոմիտեի ծառայողների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու հարցը:⁴¹ Այս տեսանկյունից հարց է առաջ գալիս, թե արդյոք անգամ նախատեսված նվազագույն աշխատանքային փորձ ունեցող հայտատուների գործնական ունակությունները կարող են գնահատվել անբավարար և հանգեցնել հայտի մերժման՝ հատկապես հաշվի առնելով այն, որ օրենքը գիտական կոչումի առնչությամբ չի մասնավորեցնում քրեական արդարադատության ոլորտը, այլ տալիս է ընդհանուր ձևակերպում: Ստացվում է, որ սահմանված ստաժ ունեցող անձի կարգավիճակը հավասարվում է Ակադեմիայում ուսումնառություն անցած անձի կարգավիճակին, ինչի արդյունքում տեսականորեն անգամ քրեական դատավարության ոլորտում չմասնագիտացած, սակայն իրավաբանի ստաժ ունեցող անձը կարող է ներգրավվել թեկնածուների ցուցակում և այնուհետև նշանակվել քննիչի պաշտոնում: Հաշվի առնելով նաև այն, որ հստակ չէ Որակավորման հանձնաժողովի կողմից այդ խումբ անձանց թեկնածությունը մերժելու հնարավորությունը և այդպիսի հնարավորության դեպքում՝ մերժման հիմքերը՝⁴² ստացվում է, որ այդ անձինք կարող են միանգամից ներգրավվել թեկնածուների ցուցակներում՝ առանց պարզելու նրանց մասնագիտական կարողությունների՝ նշանակվելիք պաշտոնին համապատասխանությունը: Ինչ վերաբերում է նշված երկրորդ հիմքով Ակադեմիայում ուսումնառությունից ազատմանը, ապա այս տեսանկյունից խնդրահարույց կարող է լինել նաև այն, թե գիտական կոչում ունեցող անձն արդյոք տիրապետում է այնպիսի հմտությունների և

⁴¹ՔԿՕ Հոդված 18, մասեր 10-11:

⁴²Տես նաև ՔԿՕ հոդված 20, մաս 6:

օժտված է արդյոք այնպիսի հատկանիշներով, որոնք անհրաժեշտ են գործնական քննչական աշխատանք իրականացնելու համար: Այսպես, քննիչների նշանակումը հիմնականում կախված է Արդարադատության ակադեմիայում թեկնածուի ուսումնառության գնահատումից և գնահատման արդյունքում Կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակից թեկնածուների նշանակումից: Այս համատեքստում էական նշանակություն ունի, թե որքանով են որոշակի քննիչներին ներկայացվող պահանջները և ինչ չափանիշների հիման վրա է իրականացվում նրանց գնահատումը, ինչ սկզբունքով են Կոմիտեի որակավորման հանձնաժողովի կողմից կազմվում թեկնածուների ցուցակները և այդ ցուցակներից կատարվում նշանակումները, և մասնավորապես՝ Կոմիտեի որակավորման հանձնաժողովի անկախության համար ինչպիսի երաշխիքներ են գործում, որ կարող է դրսևորվել ինչպես դրա անդամների նշանակման, այնպես էլ գործունեության կարգի միջոցով:

ա) Քննիչների նշանակման գործընթացում ներգրավված մարմինների, ձևավորումը

Կոմիտեի որակավորման հանձնաժողովը ապահովում է Կոմիտեում ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող որակավորման տարեկան և լրացուցիչ ստուգումները, Կոմիտեում ատեստավորման ենթակա ծառայողների ատեստավորում անցկացնելու գործընթացը, Կոմիտեի ծառայողների ծառայողական առաջխաղացման ցուցակի ձևավորումը, ինչպես նաև իրականացնում Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքով սահմանված որոշ գործառույթներ: *Կոմիտեի որակավորման հանձնաժողովը կազմված է 9 անդամից՝ Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, Կոմիտեի 4 ծառայող, 4 իրավաբան-գիտնական: Որակավորման հանձնաժողովի անդամներին նշանակում է Կոմիտեի նախագահը՝ 3 տարի ժամկետով (ՔԿՕ Հոդված 15, մասեր 5-7):* Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է Կոմիտեի նախագահի տեղակալը:

Պետք է նշել, որ առկա իրավական կարգավորումներով չեն հստակեցվում, թե ինչ չափանիշների հիման վրա և ընթացակարգով է Կոմիտեի նախագահը ընտրում և նշանակում որակավորման հանձնաժողովի անդամներին: Խնդրահարույց է նաև այն, որ Օրենքը նշում է, որ Կարգապահական հանձնաժողովի անդամներն անկախ են, և նրանց գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է (ՔԿՕ հոդված 15, կետ 4), մինչդեռ նման դրույթ առկա չէ Որակավորման հանձնաժողովի անդամների առնչությամբ:

Ավելին, կարգապահական հանձնաժողովի դեպքում առավել հստակ է անդամների նշանակման ընթացակարգը, մինչդեռ որակավորման հանձնաժողովի դեպքում միակ կարգավորումն այն է, որ **անդամները նշանակվում են Կոմիտեի նախագահի կողմից**։ Այսպիսի մոտեցումը կարող է խնդրահարույց լինել որակավորման հանձնաժողովի անկախության տեսանկյունից՝ պայմանավորված նրանով, որ չկան օրենքով նախատեսված անկախության հստակ երաշխիքներ, իսկ որակավորման հանձնաժողովի անդամները նշանակվում են Կոմիտեի նախագահի կողմից՝ առանց հստակ չափանիշների և ընթացակարգի, որոնք հնարավոր կդարձնեին անդամների ընտրության հիմնավորվածության գնահատումը։

Ներկայացված կարգավորումից բխում է, որ Կոմիտեի նախագահը և նրա տեղակալը կարող են ազդեցություն ունենալ քննիչների նշանակման գործընթացի վրա՝ մասնավորապես հաշվի առնելով նաև այն, որ հանձնաժողովի ձայների հավասարության դեպքում վճռորոշ է նախագահի ձայնը (հրաման, կետ 7), որը ի պաշտոնե Կոմիտեի նախագահի տեղակալն է։

Արդարադատության ակադեմիայի գնահատման հանձնաժողով. քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով։ Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում Կոմիտեի նախագահի նշանակած երեք քննիչ և արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի երկու մասնագետ (ԱԱՕ հոդված 26, մաս 2.1)։ Թե ինչ չափանիշների հիման վրա են ընտրվում և նշանակվում քննիչները և մասնագետները, օրենքը չի հստակեցնում։ Օրենքը չի նախատեսում հանձնաժողովի անդամների անկախության և անաչառության երաշխիքներ։

Արդարադատության ակադեմիայի բողոքարկման հանձնաժողով. քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննությունների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով։ Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Կոմիտեի նախագահի նշանակած երկու ներկայացուցիչ և

արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի մեկ մասնագետ (ԱԱՕ Հոդված 26, մաս 7.1):⁴³

բ) Կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակների համալրումը

Այսպես, Կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին հրամանը կարգավորում է թեկնածությունների ցուցակի համալրման համար անցկացվող գրավոր քննությունների և բանավոր հարցազրույցի կարգը:

Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրում է Որակավորման հանձնաժողովը առնվազն տարին մեկ անգամ: Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների լրացուցիչ որակավորման ստուգում:

Որակավորման ստուգումը բաղկացած է 3 փուլերից՝ փաստաթղթերի ստուգում, գրավոր քննության փուլ և հարցազրույցի անցկացման փուլ:

Փաստաթղթերի ստուգում. Որակավորման հանձնաժողովը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին առնվազն մեկ ամիս առաջ առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում, հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն՝ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները, վայրը, որակավորման գրավոր և բանավոր քննության օրերը, համալրման ենթակա տեղերի քանակը: Թեկնածուն պարտավոր է ներկայացնել սահմանված փաստաթղթերը, որոնք ներառում են, ի թիվս այլնի, ինքնակենսագրություն, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, պետական հավատարմագրված բարձրագույն իրավաբանական դիպլոմի կամ դիպլոմների և միջուկի, զին. գրքույկի, աշխատանքային գրքույկի պատճենները, բնութագիր աշխատանքի կամ վերջին ուսումնական հաստատության վայրից:

⁴³Կախված բողոքարկման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման ընթացակարգից, այն է՝ որոշումները կայացվում են միաձայն, թե մեծամասնությամբ, բողոքարկան հանձնաժողովի կազմը կարող է խնդրահարույց լինել:

Պետք է նշել, որ Որակավորման հանձնաժողովի կողմից համալրման վերաբերյալ հայտարարությամբ⁴⁴ չի նշվում համալրման ենթակա տեղերի քանակը այն դեպքում, երբ տվյալ տեղեկատվության հրապարակումը հանդիսանում է հայտարարության կարևոր պայմաններից մեկը: Համեմատության համար նշենք, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից մինչ յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը հաշվարկվում է հաջորդ երկու տարվա ընթացքում առաջին աստիճանի դատարանում դատավորների թափուր պաշտոնների համալրման համար անհրաժեշտ դատավորների քանակը և դրա հիման վրա որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին: Վերոգրյալի հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը հրապարակում է տեղեկատվություն դատավորների քանակի վերաբերյալ ըստ տարբեր մասնագիտացումների:

Այն դեպքում, երբ հայտը ներկայացվում է սահմանված ժամկետի խախտմամբ կամ հայտը չի բավարարում ՔԿՕ-ով նախատեսված պահանջները, ապա հայտի ընդունումը մերժվում է: Հանձնաժողովի կողմից մերժված հայտը կարող է բողոքարկվել դատական կարգով և հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հայտատուի հայտը քննարկվում է Հանձնաժողովի կողմից: Տվյալ դեպքում ստացվում է, որ դատարանի կողմից կայացված որոշումից հետո հայտի բավարարման կամ մերժման հայեցողությունը կրկին մնում է Որակավորման հանձնաժողովի հայեցողությանը, որի պայմաններում նվազեցվում է անձի դատական պաշտպանվածության իրավունքի դերը:

Գրավոր քննություն. Թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող գրավոր քննության հարցաշարը կազմվում է նախօրոք, հաստատվում է Կոմիտեի նախագահի կողմից և քննությունից առնվազն մեկ ամիս առաջ հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում: Հարցաշարը բաղկացած է երկու հարյուր երեսուն հարցից, որոնք ընդգրկում են հետևյալ բնագավառները՝ քրեագիտություն՝ 50 հարց, ՀՀ քրեական իրավունք՝ 100 հարց, ՀՀ քրեադատավարական իրավունք՝ 80 հարց⁴⁵: Որակավորման հանձնաժողովը մինչև գրավոր քննությունը համակարգչում գետեղված կամ թղթային տարբերակով

⁴⁴Իտարկումը կատարվել է՝ հիմք ընդունելով վերջին՝ 2020թ. նոյեմբերի 2-ի հայտարարությունը:

⁴⁵Պետք է նշել, որ ներկայացված հարցաշարը որևէ փոփոխության չի ենթարկվել նախորդող մի քանի տարիների ընթացքում և չնայած օրենսդրական փոփոխություններին, կան հարցեր, որոնք դեռևս մնացել են նախորդ խմբագրմամբ:

կազմված հարցաշարից պատահական ընտրությամբ ընտրում է գրավոր քննություն անցկացնելու համար հարցեր և կազմում հայտատուների քանակին համապատասխան հարցատոմսեր՝ յուրաքանչյուր բաժնից մեկական հարց:

Ներկայումս գրավոր քննության փուլն իրենից ներկայացնում է քրեական իրավունքից, քրեական դատավարությունից և քրեագիտությունից մեկական տեսական հարցերի շարադրանք, որի համար տրամադրվում է 2 ժամ ժամանակ: Մինչդեռ, ապագա քննիչների գիտելիքների գնահատման և նրանց կողմից քրեաիրավական և քրեադատավարական հարցերի իմացության գնահատման համար նախընտրելի կլինեն քննական այլ կարգի նախատեսումը՝ իրավիճակային խնդիրների լուծման տեսքով, որի պայմաններում կստուգվեն ոչ միայն ապագա քննիչների մասնագիտական գիտելիքները, այլև վերլուծելու և պատճառաբանելու կարողությունները, մտածողությունը և այլն:

Ըստ իրավական կարգավորումների՝ գրավոր աշխատանքն ստուգելիս Որակավորման հանձնաժողովը գնահատում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը: Ստուգված գրավոր աշխատանքը պետք է պարունակի դրանցում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կատարած համապատասխան նշումները, որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ անելու գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալու ստուգված գրավոր աշխատանքին և ներկայացնելու իր նկատառումները: Տվյալ դրույթից կարելի է ենթադրել, որ կոնկրետ աշխատանքի ստուգումը հիմնականում իրականացվում է հանձնաժողովի մեկ անդամի կողմից և ստուգումից հետո տվյալ աշխատանքի վերջնական գնահատման վերաբերյալ քննարկում կարող է և չիրականացվել:

Գրավոր քննությունների առնչությամբ պետք է նաև արձանագրել քննության արդյունքների գնահատման չափանիշների անհատակությունը, քանի որ առկա չէ գնահատման չափանիշների կամ գնահատման կարգի մասին որևէ հրապարակային փաստաթուղթ:

Բանավոր քննություն. գրավոր քննությունից դրական գնահատական ստանալուց հետո հայտատուները հանձնում են նաև բանավոր քննություն: Բանավոր քննության նպատակը հայտատուի գործնական ունակությունների և հմտությունների ստուգումն է: Բանավոր քննության առաջադրանքն իրենից ներկայացնում է մեկ իրավական

խնդիր, որը կազմվում է գրավոր քննության համար նախատեսված հարցաշարի շրջանակներում՝ Կոմիտեի իրավաբանական վարչության կողմից:⁴⁶

Բանավոր քննության ընթացքում հայտատուին կարող են տրվել նաև առաջադրանքին առնչվող հարակից բանավոր հարցեր: Բանավոր քննության ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հայտատուին կարող է տալ առավելագույնը երկու հարակից հարց: Յուրաքանչյուր հարցից հետո, հարց տվող Հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ նշվում է ճիշտ պատասխանը: Հարակից հարցերի ընդհանուր քանակը չի կարող գերազանցել տասը հարցը: Հանձնաժողովը քվեարկության միջոցով հայտատուին գնահատում է դրական կամ բացասական: Բանավոր քննության ընթացքը ձայնագրվում կամ տեսաձայնագրվում է: Բանավոր քննության վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որում նշվում են առաջադրանքը, հարակից հարցերը, հայտատուի պատասխանների ճիշտ կամ սխալ լինելը և քվեարկության արդյունքները: Արձանագրությունը ստորագրում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

Կարևոր է, որ մինչ 2021թ. դեկտեմբերը գործող կարգավորումներով բանավոր քննության ընթացքում ներկայացված խնդրի վերլուծության և հանձնաժողովի կողմից տրված հարցերի միջոցով թեև հնարավոր էր պատկերացում կազմել անձի մասնագիտական պատրաստվածության աստիճանի մասին, սակայն այն չէր բացահայտում քննիչի թեկնածուի հոգեբանական հատկանիշները:

ՀՀ իրավական համակարգում արդեն իսկ ներդրված՝ դատավորների նկատմամբ հոգեբանական թեստավորումը անցկացվում է որպես առանձին թեստ, որն ուղղված է գնահատելու հավակնորդի էմոցիոնալ ինտելեկտը (ինքնաճանաչման մակարդակը, ինքնակառավարման մակարդակը, սոցիալական կարողությունները և հարաբերությունների կառավարման ունակությունները), բարոյական դատողությունը (ազնվությունը, սկզբունքայնությունը, արդարամտությունը), և արժեքային համակարգը:⁴⁷ Այս համատեքստում նաև նշենք, որ քննչական մեթոդների և ռազմավարության վերաբերյալ Եվրոպական Միության առաքելության՝ 2015թ.-ին ՀՀ կատարած այցի արդյունքում քննիչների անհրաժեշտ հմտությունների առումով

⁴⁶ ՀՀ ՔԿ նախագահի [հրամանը](#)՝ որակավորման հանձնաժողովի գործունեության, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով քննությունների և ատեստավորում անցկացնելու, առաջխաղացման ցուցակի ձևավորման կարգերը հաստատելու մասին (15.12.2021թ. թիվ 171-Լ), կետեր 12, 36-47:

⁴⁷ ԲԴԽ որոշումը Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը հաստատելու մասին, ԲԴԽ-57-Ն-11, 2020թ.:

կարևորվել էր, որ թիմային աշխատանքը, հաստատակամությունը, տրամաբանական մտածողությունը, կազմակերպչական ունակությունը (ի թիվս ուրիշների) այն հմտություններն են, որոնք անհրաժեշտ են քննչական գործունեություն իրականացնելու համար: Քննիչը ոչ միայն պետք է գնահատվի այս հմտություններին տիրապետելու առումով, այլև ընտրությունը պետք է իրականացվի տվյալ հմտությունների հիման վրա ևս:⁴⁸

2021թ. ընդունված՝ Կոմիտեի նախագահի համապատասխան հրամանով նախատեսվում է անցկացնել նաև հայտատուի հոգեբանական գնահատում:⁴⁹

Այսպես, քննություններից դրական գնահատական ստացած անձինք լրացնում են հարցաթերթիկ, ինչը ներառում է հոգեբանական բնույթի հարցեր, որի նպատակը հարցաթերթիկ լրացնելու միջոցով հայտատուի կողմից քննիչի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հոգեբանական, կամային, հաղորդակցային և մյուս որակների ուսումնասիրությունն է: Հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակն ընդգրկում է մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող և մասնագիտական գործունեության արդյունավետությանը խոչընդոտող որակների վերաբերյալ հարցադրումներ:

Կոմիտեի նախագահի հրամանով մասնավորեցվում է այն որակական հատկանիշների շրջանակը, որոնք հարցաթերթիկում ներառված հարցերի միջոցով հնարավոր է լինում գնահատել. դրանք ներառում են Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու շարժառիթն ու ակնկալիքը, դիտողունակությունը, անհրաժեշտ տեղեկություններին արագ և որակյալ արձագանքելու ունակությունը, արագ մտածելու, կողմնորոշվելու ունակությունը, մտքերը դիպուկ և հասկանալի արտահայտելու ունակությունը, տեղեկությունն արագ վերլուծելու և մշակելու ունակությունը, մարդկանց լսելու ունակությունը, նպատակասլացությունը, համառությունը, ազնվությունը և այլն: Գնահատվում են նաև մասնագիտական գործունեության արդյունավետությանը խոչընդոտող որակական հատկանիշներ, ներառյալ՝ աշխատանքի նկատմամբ ձևական (ֆորմալ, ոչ մոտիվացված) վերաբերմունքը, սեփական մտքերը արտահայտելու դժվարությունները, ցրվածությունը, դրական փոխհարաբերություն ստեղծելու անկարողությունը, անհանդուրժողականությունը, ծուլությունը, տպավորվողականությունը:

⁴⁸Փորձագիտական զեկույց, Քննչական մեթոդների և ռազմավարությունների վերաբերյալ ԵՄ փորձագիտական առաքելություն, միջոցառում Nr.JHA IND/EXP 58497 (մայիս 2015):

⁴⁹ ՀՀ ՔԿ նախագահի [հրամանը](#)՝ որակավորման հանձնաժողովի գործունեության, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով քննությունների և ատեստավորում անցկացնելու, առաջխաղացման ցուցակի ձևավորման կարգերը հաստատելու մասին (15.12.2021թ. թիվ 171-Լ), կետեր 48-59:

Վերոնշյալ հատկանիշները գնահատվում են Կոմիտեում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող հոգեբանի կողմից՝ միջազգային պրակտիկայում ընդունելի համարվող և կիրառվող հոգեբանական թեստերի համակցության միջոցով, որոնցով հնարավոր է ստուգել հայտատուի (1) էմոցիոնալ ինտելեկտը (ինքնաճանաչման մակարդակը, ինքնակառավարման մակարդակը, սոցիալական կարողությունները և հարաբերությունների կառավարման ունակությունները), (2) բարոյական դատողությունը (ազնվությունը, սկզբունքայնությունը, արդարամտությունը), (3) արժեհամակարգը:

Հոգեբանը հարցաթերթիկի լրացման արդյունքների հիման վրա 1-ից 10-ը բալանոց սանդղակով (որտեղ 1-ն ամենացածրն է, իսկ 10-ն՝ ամենաբարձրը) գնահատում է հայտատուի հոգեբանական որակական հատկանիշները՝ պահպանելով հարցաթերթիկին վերաբերող տեղեկատվության գաղտնիությունը: Նշենք նաև, որ հարցաթերթիկը լրացնելուց բացի նախատեսվում է նաև հոգեբանի հետ հարցազրույց անցկացնելու հնարավորությունը, մասնավորապես՝ հարցաթերթիկի հարցադրումների հստակեցման նպատակով հոգեբանը կարող է հայտատուի հետ անցկացնել նաև հարցազրույց: Գնահատումն ավարտելուց հետո հոգեբանը հարցաթերթիկի գնահատման արդյունքները ուղարկում է Որակավորման հանձնաժողովին:

Արդյունքում, Որակավորման հանձնաժողովը յուրաքանչյուր հայտատուի մասով ուսումնասիրում է ինչպես մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող, այնպես էլ մասնագիտական գործունեության արդյունավետությանը խոչընդոտող որակական հատկանիշները, կարողությունները, անհատական հոգեբանական առանձնահատկությունները, որոնց վերաբերյալ տալիս է դրական կամ բացասական եզրակացություն, որն ուղարկվում է Կոմիտեի նախագահին:

Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածի ավարտին Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ չստանալու դեպքում անձը կարող է դիմել Հանձնաժողով՝ իր գործնական և տեսական ունակություններն ստուգելու համար: Դրական եզրակացություն ստանալու դեպքում անձը ևս երեք տարի ժամկետով շարունակում է ընդգրկված մնալ թեկնածությունների ցուցակում: Հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան՝ որոշումը հրապարակվելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Սակայն, անհրաժեշտ է փաստել, որ թերևս ներդրվել են քննիչների թեկնածուների հոգեբանական թեստավորման ընթացակարգեր, բարեկարգության ստուգման առանձին ընթացակարգեր դեռևս առկա չեն:

Քննություններից դրական գնահատական ստացած և հարցաթերթիկը լրացնելուց հետո դրական եզրակացություն ստացած հայտատուները Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա ընդգրկվում են թեկնածությունների ցուցակում երեք տարի ժամկետով՝ Հանձնաժողովի որոշմամբ: Թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ՀՀ Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ծրագիր են անցնում և հանձնում որակավորման քննություն, բացառությամբ ՔԿՕ-ով նախատեսված դեպքերի: Ուսումնառությունը չանցած անձը հանվում է թեկնածությունների ցուցակից՝ Որակավորման հանձնաժողովի որոշմամբ:⁵⁰

զ) Ուսուցում Արդարադատության ակադեմիայում

Արդարադատության ակադեմիայում ուսումնառության տևողությունը սահմանում է Կոմիտեի նախագահը⁵¹ (ԱՍՕ Հոդված 22, մաս 2.1), որի հիման վրա ընդունվում է Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիր:⁵² Ուսուցումն իրականացվում է առկա ուսուցման (լսարանային ուսուցում) և փորձաշրջանի եղանակներով: Ծրագիրն իրականացվում է երկու խմբով, յուրաքանչյուր խմբի դասընթացների ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 150 ակադեմիական ժամ և 6 ակադեմիական ժամ քննաշրջանի համար: Ուսումնառությունն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

Մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը ներառում է չորս առարկա.

(1) Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները, (2) ՀՀ քրեական դատավարության արդի

⁵⁰ Նշենք, որ Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածում անձը երկու անգամ ինքնավար պաշտոն զբաղեցնելու գրավոր առաջարկ ստանալու և դրանից հրաժարվելու դեպքում հանվում է թեկնածությունների ցուցակից:

⁵¹ Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ (2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 10-Լ հրամանով կատարված փոփոխությամբ):

⁵² Արդարադատության ակադեմիա, ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիր, 2020թ.

(http://www.justiceacademy.am/assets/attachments/masnagitakan_patrastum_2020.pdf):

հարցեր, (3) ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր, (4) Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա:

Նշենք, որ Ակադեմիայում ուսուցման 6 ամիս տևողությունը, ներառյալ՝ փորձաշրջանը, ԵՄ փորձագետների կողմից շատ կարճ է գնահատվել՝ համեմատած շատ եվրոպական երկրներում Դատավորների և Ոստիկանների վերապատրաստման ժամանակահատվածի տևողության հետ, և բավականին կարճատև է կրթության բավարար մակարդակի համար՝ որպես քննիչ աշխատելու համար: Չնայած այդ գնահատականներին՝ ուսման տևողությունը ավելի կրճատվել է. 2020թ. քննիչների թեկնածուների ուսուցման տևողությունը կազմում էր մոտ 5 ամիս,⁵³ իսկ 2021թ. ծրագրով այն կազմում է մոտ 4 ամիս,⁵⁴ ներառյալ՝ 3-ամսյա փորձաշրջանը:

Պետք է նշել, որ Ակադեմիայում դասավանդողների առումով մտահոգություն է արտահայտվել նաև առ այն, որ նրանց շարքում չկան գործող քննիչներ:⁵⁵

Փորձաշրջան. ուսուցման երկրորդ փուլը կազմում է փորձաշրջանը: Այն կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի ընդհանուր տևողությունը 3 ամիս է: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:⁵⁶ Փորձաշրջանը ղեկավարում է փորձաշրջանի ղեկավարը, և ունկնդիրների բաշխումը, ըստ փորձաշրջանի ղեկավարների, կատարում է Արդարադատության ակադեմիայի ռեկտորը: Կոմիտեի նախագահը, Ռեկտորի ներկայացրած բաշխմանը համապատասխան, իր հրամանով անձին նշանակում է փորձաշրջանի ղեկավար:⁵⁷ Ռեկտորի կողմից ղեկավարների բաշխումը պետք է կատարվի այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին տեղեկությունների հաշվառմամբ, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել ունկնդրի նկատմամբ փորձաշրջանի ղեկավարի անկողմնակալության մեջ:

⁵³Արդարադատության ակադեմիա, ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիր, 2020թ. (http://www.justiceacademy.am/assets/attachments/masnagitakan_patrastum_2020.pdf):

⁵⁴Արդարադատության ակադեմիա, ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիր, 2021թ. (https://justiceacademy.am/assets/attachments/tek_masn_verap_2021.pdf)

⁵⁵Փորձագիտական զեկույց, Քննչական մեթոդների և ռազմավարությունների վերաբերյալ ԵՄ փորձագիտական առաքելություն, միջոցառում Nr.JHA IND/EXP 58497 (մայիս 2015):

⁵⁶Արդարադատության ակադեմիա, ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողների թեկնածուությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիր, 2020թ., կետ 6 (http://www.justiceacademy.am/assets/attachments/masnagitakan_patrastum_2020.pdf):

⁵⁷ԱՍՕ հոդված 24, մաս 3:

Փորձաշրջանի ղեկավարի աշխատանքը համարվում է կրթական աշխատանք, որի համար վերջինս վարձատրվում է:⁵⁸ Փորձաշրջանի ղեկավարը կրում է փորձաշրջանի կազմակերպման պատասխանատվությունը, նա ունկնդրի կողմից թերացումների մասին տեղյակ է պահում ունկնդրին, իսկ էական թերացումներ նկատելու դեպքում՝ նաև ռեկտորին (ԱՍՕ հոդված 24, մաս 6): Փորձաշրջանի ավարտից հետո ներկայացվում է հաշվետվություն, սահմանված ձևի գնահատագիր. ունկնդիրը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու գնահատագրին և կարող է նաև այն բողոքարկել Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդ (ԱՍՕ, Հոդված 25):

Փորձաշրջանի առնչությամբ անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել հետևյալ խնդրահարույց հարցերին:

Առաջին, փորձաշրջանի տևողությունը այլ եվրոպական պետությունների համեմատությամբ կարճ է:⁵⁹ Փորձաշրջանի իրականացումը, դրա արդյունավետությունը կախված է առանձին ղեկավարից, նրա հմտություններից և ունկնդրի հետ տարվող աշխատանքի որակից, ինչի հետևանքով հնարավոր է՝ բոլոր ունկնդիրների համար հասանելի չլինի նմանատիպ որակի փորձաշրջան:

Նշենք, որ փորձաշրջանի համար կազմվում է փորձաշրջանի անհատական ծրագիր, դրա ընթացիկ արդյունքները ամփոփվում են ունկնդրի և փորձաշրջանի ղեկավարի կողմից լրացվող ընթացիկ հաշվետվությունների թերթիկում, որտեղ ներկայացվում են ընթացիկ առաջադրանքները և կատարողականները, և առանձին լրացվում է փորձաշրջանի ամփոփ հաշվետվություն: Փորձաշրջանի ավարտին փորձաշրջանի ղեկավարը կազմում է ունկնդրի փորձաշրջանի գնահատագիր՝ ներկայացնելով ունկնդրի գործունեության արդյունքների, նրա դրսևորած գործնական և անձնական հատկանիշների նկարագրությունը, ինչի հիման վրա էլ փորձաշրջանի արդյունքները գնահատում են դրական կամ բացասական: Նշված հաշվետվությունները ներկայացվում են Արդարադատության ակադեմիայի կողմից սահմանված ձևաթղթերը լրացնելու միջոցով:⁶⁰

⁵⁸ԱՍՕ, հոդված 24:

⁵⁹Փորձագիտական զեկույց, Քննչական մեթոդների և ռազմավարությունների վերաբերյալ ԵՄ փորձագիտական առաքելություն, միջոցառում Nr.JHA IND/EXP 58497 (մայիս 2015):

⁶⁰Ձևաթղթերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://www.justiceacademy.am/assets/attachments/Practice-order.pdf>:

Արդարադատության ակադեմիայի առարկայական կուրսի արդյունքների գնահատումը. Արդարադատության ակադեմիայում ուսումն ավարտելուց հետո կազմակերպվում է նշանակման համար անհրաժեշտ վերջին փուլը, այն է՝ առարկայական կուրսի արդյունքների գնահատումը, որն իրականացվում է գնահատման հանձնաժողովի կողմից: Գրավոր քննության համար նախատեսված կարգից բացառություններ կարող են նախատեսվել Խորհրդի որոշմամբ այն առարկայական կուրսերից հանձնվող քննությունների համար, որոնք չեն կարող անցկացվել գրավոր եղանակով:

Գրավոր քննություններ. գրավոր քննությունների անցկացման հնարավոր տարբերակներն են խնդիրների լուծում (որոշակի ուսումնական նյութերի օգտագործման հնարավորությամբ կամ առանց դրա), թեստեր, բաց հարցեր, նշված տարբեր ձևերի համադրմամբ կազմված առաջադրանքներ, Ակադեմիայի Ռեկտորի կողմից սահմանված այլ ձևով:⁶¹

Ստուգված գրավոր աշխատանքները պետք է պարունակեն դրանցում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կատարած համապատասխան նշումներ, որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ անելու գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին:⁶² Ունկնդիրն իրավունք ունի դիմելու և գնահատման հանձնաժողովի անդամներից ստանալու իր գնահատականի վերաբերյալ լրացուցիչ բանավոր պարզաբանումներ:

Գնահատման չափորոշիչները սահմանվում են յուրաքանչյուր քննության համար առանձին: Գրավոր քննության յուրաքանչյուր աշխատանքի ստուգումը իրականացնում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված երկու ստուգողները, որոնցից մեկը պետք է լինի քննիչ, իսկ մյուսը՝ գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:⁶³ Եթե ստուգողների նշանակած միավորներում առկա է առնվազն 20 տոկոսից ավելի շեղում, նշանակվում է լրացուցիչ ստուգում, որին մասնակցում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված մեկ այլ քննիչ և գիտության համապատասխան

⁶¹ Նավելված 7 Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի «21» 02. 2017թ. թիվ 3 որոշման, ՔԿ քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց քննությունների կազմակերպման և անցկացման Կարգ, կետ 2.2. <http://www.justiceacademy.am/assets/attachments/exam-order2.pdf>:

⁶² ԱԱՕ, հոդված 27, կետ 8:

⁶³ ԱԱՕ Հոդված 27, մաս 3:

բնագավառի՝ արդարադատության նախարարի նշանակած մյուս մասնագետը:⁶⁴ Վերոնշյալ կարգավորումներն ուղղված են ապահովելու գնահատման գործընթացում հստակություն և հնարավոր սուբյեկտիվության բացառում:

Բանավոր քննություններ. Բանավոր քննության հարցերի ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ, որից հետո ունկնդրին տրվում է առնվազն 15 րոպե ժամանակ՝ պատրաստվելու համար: Հարցերի շուրջ բանավոր ելույթը տևում է առավելագույնը 15 րոպե: Ունկնդրի ելույթից հետո գնահատման հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն քննական առաջադրանքի շրջանակներում հարցեր առաջադրել ունկնդրին: Քննության ժամանակ գնահատման հանձնաժողովի անդամներին տրամադրվում են գնահատման չափանիշները և համապատասխան նշումներ կատարելու համար անհատական գնահատման թերթեր: Գնահատման չափանիշները սահմանվում են յուրաքանչյուր քննության համար առանձին և կարող են ներառել ունկնդրի գիտելիքները, հմտությունները, վերլուծական կարողությունները, բանավոր խոսքի որակը և այլն: Կախված քննական նյութի առանձնահատկություններից՝ կարող են տրամադրվել քննության գնահատման ուղենիշային տիպային պատասխաններ կամ օրենսդրական ակտեր, որոնք ունեն միայն ուղորդող նշանակություն և գնահատման հանձնաժողովի անդամները սահմանափակված չեն դրանց բովանդակությամբ:

Բանավոր քննության ավարտից հետո գնահատման հանձնաժողովը գաղտնի և դոկտրինային ընթացակարգով իրականացնում է յուրաքանչյուր ունկնդրի գնահատման վերաբերյալ ամփոփիչ քննարկում, իսկ գնահատումն իրականացվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից անհատական գնահատման թերթիկի լրացման միջոցով: Վերջնական գնահատականը որոշվում է բոլոր անդամների կողմից տրված գնահատականների միջին թվաբանականի որոշման միջոցով:

Գնահատման արդյունքների բողոքարկում. յուրաքանչյուր ունկնդիր գնահատման հանձնաժողովի որոշման հրապարակման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող է դիմել բողոքարկման հանձնաժողով, եթե համարում է, որ խախտվել է քննությունների անցկացման ընթացակարգը, կամ վիճարկում է քննության գնահատականը: Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են: Օրենքը նախատեսում է նաև բողոքարկման հանձնաժողովի

⁶⁴ ԱԱՕ Հոդված 27, մաս 3:

որոշումների՝ վարչական դատարանում բողոքարկելու հնարավորություն, սակայն բացառապես քննությունների անցկացման ընթացակարգի, գրավոր աշխատանքների ստուգման, գնահատման և բողոքարկման ընթացակարգային նորմերի խախտման հիմքով (ԱԱՕ, հոդված 26, կետ 14):

Քննիչների թեկնածուների պաշտոնի նշանակումը

Վերոնշյալ գործընթացի արդյունքում կատարվում է Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի վերջնական համալրում, և ցուցակից նշանակվում են քննիչներ Կոմիտեի թափուր հաստիքներում: Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածի ավարտին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու առաջարկ չստանալու դեպքում անձը կարող է դիմել որակավորման հանձնաժողով՝ իր գործնական և տեսական ունակություններն ստուգելու համար: Դրական եզրակացություն ստանալու դեպքում անձը ևս երեք տարի ժամկետով շարունակում է ընդգրկված մնալ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում (ՔԿՕ 18-րդ հոդված, 8-րդ մաս):

Պետք է նշել, որ օրենքով սահմանված չեն նշանակման հերթականության որոշման սկզբունքներ և չափանիշներ: Ի պատասխան այս հարցի վերաբերյալ Կոմիտեին ուղղված հարցմանը՝ ստացվել է պարզաբանում, որ Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտելուց հետո քննիչների՝ պաշտոնի նշանակման առաջնահերթությունը որոշելիս հիմք են ընդունվում մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմությունը, կոնկրետ ստորաբաժանումներում թափուր հաստիքների առկայությունը և դրանց թվաքանակը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հնարավորության դեպքում հաշվի են առնվում տարածքային սկզբունքով մարզերում կամ մայրաքաղաքում թեկնածուների բնակության կամ գտնվելու հանգամանքը և այլն:⁶⁵ Ինչ վերաբերում է կոնկրետ տարում ուսումնառությունն ավարտած և քննությունները հաջողությամբ հանձնած թեկնածուների նշանակմանը, մասնավորապես՝ թե արդյո՞ք քննությունները հանձնած բոլոր թեկնածուները նշանակվում են որպես քննիչ, ապա նրանք նշանակվում են առկա թափուր

⁶⁵ՀՀ քննչական կոմիտեի կողմից Կազմակերպության հարցման պատասխան գրություն առ 22 մայիսի 2020թ.:

հաստիքների թվաքանակին համապատասխան, իսկ դրանց բացակայության պարագայում՝ հետագայում այդպիսիք առաջանալուց անմիջապես հետո:⁶⁶

դ) Ատեստավորում և առաջխաղացում

Կոմիտեի քննիչների ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ: Արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո Կոմիտեի նախագահի հրամանի հիման վրա կամ Կոմիտեի քննիչի ցանկությամբ, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական և տեսական ունակությունների ստուգման արդյունքների հիման վրա (ՔԿ մասին օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 2.1-ի մասի համաձայն՝ Որակավորման հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մեկ տարի վեց ամիս հաճախականությամբ ստուգվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական և տեսական ունակությունները):

Ատեստավորումն իրականացվում է փաստաթղթային կամ փաստաթղթային և հարցազրույցի փուլերով: Ատեստավորման ընթացքում ուսումնասիրվում է առաջին հերթին ատեստավորվող անձի ծառայողական բնութագիրը: Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ ատեստավորվողի մասին՝ ծննդյան թիվը, ազգությունը, կրթությունը, այլ մարմիններում և զբաղեցրած պաշտոնում աշխատանքային ստաժը, նշանակումից կամ նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ունեցած խրախուսանքներն ու կարգապահական տույժերը, գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը հիմնվում է ատեստավորվողի նշանակումից կամ նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում կատարած տարեկան աշխատանքների արդյունքների վերաբերյալ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վրա: Ծառայողական բնութագրի վերջում ներկայացվում է համապատասխան հետևություն:⁶⁷

⁶⁶Նույն տեղում:

⁶⁷ ՀՀ ՔԿ նախագահի [հրամանը](#)՝ որակավորման հանձնաժողովի գործունեության, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով քննությունների և ատեստավորում անցկացնելու, առաջխաղացման ցուցակի ձևավորման կարգերը հաստատելու մասին (15.12.2021թ. թիվ 171-Լ)

Նշենք, որ նախկին կարգավորումների համաձայն՝ բացառիկ դեպքերում փաստաթղթային փուլի արդյունքները բավարար կարող էին լինել ծառայողի նկատմամբ «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» հանձնաժողովի որոշման ընդունման համար՝ հանձնաժողովի անդամի առաջարկով քվեարկության և պաշտոնին համապատասխանության հարցի միաձայն ընդունման և առարկությունների բացակայության դեպքում:⁶⁸ Սակայն Կոմիտեի նախագահի հրամանը չէր մանրամասնում, թե որոնք են այն բացառիկ դեպքերը և հանգամանքները, որոնց դեպքում միայն փաստաթղթային փուլի արդյունքները բավարար կարող են լինել: Նոր կարգավորումներով չի նախատեսվում առանց հարցազրույցի ատեստավորում:

Հարցազրույցի փուլը ատեստավորվողի մասնագիտական գիտելիքների և գործնական ունակությունների ստուգումն է⁶⁹՝ հարցաշարի հիման վրա հարցերին տրված պատասխանների միջոցով: Ատեստավորման հարցաշարերը ընդգրկում են հետևյալ բնագավառները՝ (1) ՀՀ քրեական իրավունք, (2) ՀՀ քրեական դատավարության իրավունք, (3) քրեագիտություն, (4) քրեաիրավական և քրեադատավարական ոլորտի Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային և Սահմանադրական դատարանի որոշումներ: Կախված Կոմիտեում տվյալ քննիչի զբաղեցրած պաշտոնից՝ հարցաշարի հարցերի ոլորտային բաշխվածությունը տարբերվում է:

Հարցազրույցի ընթացքում ատեստավորվողին կարող են տրվել հարցատոմսի հարցերին առնչվող հարակից հարցեր, առաջադրվել իրավիճակային խնդիրներ, որակման կամ տարբերակման հարցեր: Հարցազրույցի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ատեստավորվողին կարող է տալ առավելագույնը երկու հարց: Յուրաքանչյուր պատասխանից հետո, հարց տվող Հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը: Հարակից հարցերի ընդհանուր քանակը չի կարող գերազանցել տասը հարցը:⁷⁰ Հարցազրույցի ընթացքն արձանագրվում է, այդ թվում՝ ձայնագրվում կամ տեսաձայնագրվում: Նշենք նաև, որ նախկին կարգավորումներով հարցազրույցի ձայնագրումը կան տեսաձայնագրումը

⁶⁸ Նույն տեղում, կետ 50.5:

⁶⁹ Նույն տեղում, կետ 19:

⁷⁰ Նույն տեղում, կետ 29

պարտադիր չէր, մինչդեռ այժմ ձայնագրումը կան տեսաձայնագրումը սահմանված է որպես պարտադիր պահանջ:

Ատեստավորման արդյունքում կարող է օրենքով սահմանված որոշումներից մեկը (35-րդ հոդվածի 14-րդ մաս), մասնավորապես՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության, առաջխաղացման ցուցակում ընդգրկելու, լրացուցիչ վերապատրաստում անցնելու, արտահերթ դասային աստիճան շնորհելու վերաբերյալ, ինչպես նաև զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության վերաբերյալ՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին կամ պաշտոնից ազատելու մասին: Նշենք, որ արտահերթ ատեստավորումը չի կարող հանգեցնել առաջխաղացման ցուցակում ընդգրկման կամ արտահերթ դասային աստիճան շնորհելուն: Մինչդեռ, նախկին կարգավորումներով այսպիսի սահմանափակում չէր նախատեսվում:

Այդուհանդերձ, նոր կարգավորումներով նախատեսված է արտահերթ կարգով առաջխաղացման հնարավորություն: Մասնավորապես, 2021թ. դեկտեմբերի 15-ին ընդունված՝ ՀՀ Կոմիտեի նախագահի հրամանի⁷¹ համաձայն՝ Կոմիտեի քննիչների առաջխաղացման ցուցակը ձևավորում է Որակավորման հանձնաժողովը՝ (1) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հերթական ատեստավորման ժամանակ, (2) արտահերթ կարգով, երբ Կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալն առաջարկություն է ներկայացնում Հանձնաժողով՝ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան ծառայողական բնութագիր՝ Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա. (3) երբ Հանձնաժողովը որոշում է կայացնում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների և առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Ի տարբերություն արտահերթ առաջխաղացման վերաբերյալ նախկին կարգավորումների, որոնց վերաբերյալ կարգավորումները շատ ընդհանուր էին,⁷²

⁷¹ 15.12. 2021թ. թիվ 171-Լ հրաման «Կարգ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակի ձևավորման»

⁷² Մասնավորապես՝ միայն նախատեսվում էր, որ արտահերթ կարգով առաջխաղացման ցուցակների ձևավորումը հնարավոր էր նաև այն դեպքերում, «երբ Կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալն առաջարկություն է

ինչի պայմաններում կարելի է պնդել՝ առկա չէին այդպիսի որոշումների հիմնավորվածությունը և արդարացիությունը գնահատելու հիմքեր՝ նշված հրամանով արդեն իսկ նախատեսվում են առավել որոշակի կարգավորումներ:

Այսպես, նոր կարգավորումներով նախատեսվում է, որ արտահերթ կարգով առաջխաղացման ցուցակում ընդգրկելու համար տվյալ ստորաբաժանման պետը Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանման ղեկավար) կամ ոլորտը համակարգող նրա տեղակալին զեկուցագրով ներկայացնում է քննիչի ծառայողական բնութագիրը և պատասխանատու է ծառայողական բնութագրում ներառված տվյալների հավաստիության համար:⁷³ Արտահերթ կարգով առաջխաղացման հնարավորություն է տրվում նաև սեփական դիմումի հիման վրա, և արտահերթ կարգով առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու համար Կոմիտեի քննիչը կարող է դիմել Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանման ղեկավար) կամ ոլորտը համակարգող Կոմիտեի նախագահի տեղակալին՝ դիմումում նշելով այն պաշտոնը, որին հավակնում է: Արտահերթ առաջխաղացման համար ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի «տվյալներ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի մասին՝ ծննդյան թիվը, ազգությունը, կրթությունը, այլ մարմիններում և զբաղեցրած պաշտոնում աշխատանքային ստաժը, նշանակումից հետո ընկած ժամանակահատվածում ունեցած խրախուսանքներն ու կարգապահական տույժերը, գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը հիմնվում է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նշանակումից կամ նախորդ աստեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ անմիջական ղեկավարին ներկայացրած հաշվետվությունների հիման վրա: Ծառայողական բնութագրի վերջում արվում է հետևություն, որը բովանդակում է առաջարկություն Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ որպես խրախուսում նրան արտահերթ կարգով առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ»:⁷⁴

ներկայացնում Որակավորման հանձնաժողով՝ տվյալ ծառայողի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան ծառայողական բնութագիր»՝ չնախատեսելով ընթացակարգային այլ կարգավորումներ կամ այն հիմքերի շրջանակը, որոնց առկայության պարագայում հիմնավորված կլինեք առանձին ծառայողների արտահերթ առաջադրումը:

⁷³ Նույն տեղում, կետ 5:

⁷⁴ Նույն տեղում, կետ 7:

Մինչև Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին արտահերթ կարգով առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը, Կոմիտեի նախագահը կամ համապատասխան ոլորտը համակարգող նրա տեղակալը հարցազրույց է անցկացնում Կոմիտեի տվյալ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի հետ: Այնուհետև, կախված հարցազրույցի արդյունքներից՝ արտահերթ կարգով առաջխաղացման մասին առաջարկություն է ներկայացվում Որակավորման հանձնաժողովին, ինչի հիման վրա վերջինս տվյալ անձի հետ անցկացնում է հարցազրույց, և դրական եզրակացություն տալու դեպքում Կոմիտեի քննչն արտահերթ կարգով ընդգրկվում է առաջխաղացման ցուցակում:⁷⁵

Բացի աստեստավորումից այժմ ՔԿՕ նաև նախատեսում է, որ Որակավորման հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մեկ տարի վեց ամիս հաճախականությամբ ստուգվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործնական և տեսական ունակությունները, որն անցկացնելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Եզրակացություն

Այսպիսով, Կոմիտեի քննիչների ընտրության և նշանակման օրենսդրական կարգավորումներով չեն հստակեցվում Կոմիտեի որակավորման հանձնաժողովի անդամների ընտրության և նշանակման չափանիշները, առկա չեն որակավորման հանձնաժողովի անդամների անկախության երաշխիքներ: Քննիչների թեկնածուների համար օրենքը նախատեսում է ոչ բավարար մասնագիտական չափանիշներ, այդ թվում՝ մասնագիտական գործունեության ստաժ: Քննիչների թեկնածուների գրավոր քննություն իրենից ենթադրում է տեսական հարցերի վերաբերյալ շարադրանք, այլ ոչ իրավիճակային խնդիրներ, որոնք կստուգեն քննիչի պաշտոնի հավակնորդների ոչ միայն մասնագիտական գիտելիքները, այլև վերլուծելու, պատճառաբանելու կարողությունները, մտածելակերպը և այլն: Հստակ չեն գրավոր քննությունների գնահատման չափանիշները, հրապարակայնորեն հասանելի չէ գնահատման չափանիշների կամ կարգի վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Այնուամենայնիվ, վերջերս ընդունված կարգավորումներով արդեն իսկ սահմանվում է քննիչի պաշտոնի թեկնածուների համար հոգեբանական թեստավորում, որին

⁷⁵ Նույն տեղում, կետեր 9-12:

ներգրավվում է նաև հոգեբան: Նոր կարգավորումների արդյունավետությունը արդեն իսկ պարզ կդառնա դրանց կիրառման ընթացքում:

Սակայն դեռևս բացակայում է բարեվարքության ստուգման ընթացակարգ: Ինչ վերաբերում է քննիչների թեկնածուների ակադեմիական կրթության, ինչպես նաև փորձաշրջանի ժամկետներին, ապա դրանք բավարար չեն ապահովելու պատշաճ մասնագիտական պատրաստվածություն:

Քննչական կոմիտեի հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը

Ժողովրդավարական և իրավական երկրների պետական մարմինների գործունեության կարևորագույն սկզբունքներից են թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Դրանք համարվում են ժողովրդավարական իրավապահ գործունեության բաղադրատարրեր:⁷⁶ Իրավապահ մարմինների գործունեությունը, առանձին ծառայողների գործողությունները, իրավապահ ռազմավարությունը, պաշտոնի նշանակման գործընթացները և բյուջետային կառավարումը պետք է բաց լինեն տարբեր մարմինների կողմից վերահսկողության համար,⁷⁷ օրինակ՝ գործադիր, օրենսդիր մարմիններ, քաղաքացիական հասարակություն, ինչպես նաև վերահսկողության անկախ մարմիններ: Հաշվետվողականության այդպիսի համակարգը հնարավորություն պետք է ստեղծի որոշելու, թե որքանով են նրանք ծառայում հասարակության առջև դրված խնդիրների լուծմանը: Թափանցիկությունը և հաշվետվողականությունը փոխկապակցված երևույթներ են. մի կողմից, հաշվետվողականության առկա մեխանիզմները կանխորոշում են անհրաժեշտ թափանցիկության մակարդակը, իսկ մյուս կողմից՝ հրապարակված տեղեկությունը կանխորոշում է հնարավոր հաշվետվողականության մակարդակը:⁷⁸ Ստորև փորձ է արվում գնահատելու Կոմիտեի՝ ն՝ որպես պետական ինստիտուտի, ն՝ առանձին ծառայողների մակարդակով հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը: Վերլուծությունը կատարվում է այս պահանջների վերաբերյալ լայն ճանաչում ստացած սկզբունքների լույսի ներքո:

Հաշվետվողականություն

Հաշվետվողականությունը ենթադրում է ներքին և արտաքին զսպումներ և հակակշիռներ (checks and balances)՝ ուղղված ապահովելու հանրային ինստիտուտների ծառայողների կողմից իրենց լիազորությունների պատշաճ

⁷⁶Ժողովրդավարական ոստիկանական գործունեության ուղեցույց, ԵԱՀԿ (2008), էջ 9 (<https://www.osce.org/files/f/documents/5/3/23804.pdf>):

⁷⁷Ժողովրդավարական ոստիկանական գործունեության ուղեցույց, ԵԱՀԿ (2008), էջ 10 (<https://www.osce.org/files/f/documents/5/3/23804.pdf>):

⁷⁸N. Zúñiga, M. Jenkins and D. Jackson, *Does more transparency improve accountability?* Transparency International (2018), էջ 6:

կատարումը,⁷⁹ իրավունքի գերակայությունը և լիազորությունների չարաշահման կանխարգելումը:⁸⁰ Այդպիսի համակարգն ուղղված է ապահովելու այդ մարմինների կողմից բարեվարքության պահպանումը, կանխելու խախտումները, ինչպես նաև ամրապնդելու նրանց նկատմամբ հասարակական վստահությունը:⁸¹ Հաշվետվողականությունը պայմանավորված է վերահսկողության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով, որոնք ներկայացվում են ստորև: Այս տեսանկյունից կարևոր է, որ իրավապահ մարմինների նկատմամբ վերահսկողությունը սահմանափակված չլինի բացառապես ներքին մեխանիզմներով, այլ ներառի նաև արտաքին անկախ մարմիններ, որոնք իրավասու են ստանալու և քննելու բողոքներ տվյալ իրավապահ մարմնի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ հաշվետվողականությունը նշանակում է, որ անձը (կազմակերպությունը) պետք է պատասխանատվություն ստանձնի իր գործողությունների համար և ապահովի դրանց վերաբերյալ տեղեկությունների հրապարակայնություն:⁸²

Հաշվետվողականությունը արտահայտվում է ինստիտուցիոնալ և անհատական մակարդակներում:⁸³ Այն պետք է ներառի նաև իրավապահ ռազմավարությունները, տվյալ մարմնում պաշտոնի նշանակման գործընթացները և բյուջետային կառավարումը:⁸⁴

Հաշվետվողականության տեսանկյունից պետական մարմնի գործողությունների գնահատումը չպետք է սահմանափակվի միայն հանցավորության աստիճանի և առանձին քննչական գործողությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների հաղորդմամբ. այն պետք է ուղղված լինի գնահատելու, թե որքանով է տվյալ իրավապահ մարմինն իրականացնում իր գործառույթները և արդարացնում հասարակության սպասելիքները:⁸⁵

⁷⁹ Իրավակիրառ գործունեության և արդարադատության համակարգի մարմինների հաշվետվողականության գնահատման ձեռնարկ, էջ 5

(https://www.transparency.org/files/content/work/GUIDELINES_FOR_USE_OF_TOOL.PDF):

⁸⁰ Կոլումբոյի մեկնաբանություններ, էջ 67:

⁸¹ Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջ iv. https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/crimeprevention/PoliceAccountability_Oversight_and_Integrity_10-57991_Ebook.pdf

⁸² «Հաշվետվողականություն» հասկացության սահմանում, U4 (<https://www.u4.no/terms#accountability>):

⁸³ S. Walker, *The New World of Police Accountability* (London, Thousand Oaks and New Delhi: Sage, 2005), էջեր 7-8:

⁸⁴ Ժողովրդավարական ոստիկանական գործունեության ուղեցույց, §§ 83-84, ԵԱՀԿ (2008), էջ 9

(<https://www.osce.org/files/f/documents/5/3/23804.pdf>):

⁸⁵ ԿԻՄՄԿ, Ոստիկանական գործունեության վերաբերյալ միջազգային նորմեր և չափանիշներ, էջ 53

<https://www.icrc.org/en/doc/assets/files/other/icrc-002-0809.pdf>

Տարբեր իրավական համակարգերում հաշվետվողականության մեխանիզմների ուսումնասիրությունը վկայում է, որ հաշվետվողականության մեխանիզմը պետք է ընդգրկի իրավապահ մարմինների գործունեության օրինականության, արդյունավետության, ֆինանսավորման և ադմինիստրատիվ հարցերի նկատմամբ վերահսկողություն:⁸⁶

Այսպիսով, հաշվետվողականությունն ընդգրկում է երևույթ է և կազմված է տարբեր բաղադրիչներից: Այն առաջին հերթին ենթադրում է իրավապահ մարմինների գործողությունների, վերադասային հարաբերությունների հստակ կարգավորումներ, որը տվյալ իրավապահ մարմնի համար հնարավորություն կստեղծի հստակ իմանալու իր պատասխանատվության ոլորտների շրջանակը, որոշումներ կայացնելու առանձին իրավիճակներում, ինչպես նաև հետագայում գնահատելու տվյալ որոշման օրինականությունը, հիմնավորվածությունը և որոշելու գործողությունների և որոշումների համար հնարավոր պատասխանատվությունը:⁸⁷ Հետևաբար, այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի քրեական վարույթում ներգրավված հանրային մարմինների պատասխանատվության ոլորտների հստակեցումը և դրանով իսկ հաշվետվողականության ապահովումը:

Հաշվետվողականության այլ բաղադրիչներ են (1) իրավապահ մարմնի կողմից իր գործունեության մասին հաշվետվությունների ներկայացում, (2) իրավապահ մարմինների գործունեության մշտադիտարկում, (3) բողոքներ ներկայացնելու ընթացակարգերի առկայություն և խախտումներին արձագանքելուն ուղղված արդար և արդյունավետ ռազմավարության առկայություն, (4) աշխատակիցների պատշաճ պատրաստում, նրանց ընթացիկ աշխատանքի գնահատում և դրանից կախված՝ խրախուսանքներ և պաշտոնի բարձրացում, (5) տվյալ մարմնի գործունեության վերաբերյալ հավաստի վիճակագրության առկայություն:

Հաշվետվողականության համակարգում ներգրավված մարմինների տեսանկյունից կարելի է առանձնացնել ներքին և արտաքին հաշվետվողականության հետևյալ տեսակները:⁸⁸

⁸⁶ Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջ 198 (https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/DCAF_PIBP_Toolkit_ENG_2019_web.pdf):

⁸⁷ Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջեր 75-76

⁸⁸ Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջեր 12-13:

1. Ներքին հաշվետվողականություն. այն իրականացվում է ներքին վերադասության և հսկողության արդյունավետ կարգավորումների միջոցով, ինչպես նաև ներքին կարգապահական համակարգով: Այդ գործընթացները կարող են հանգեցնել սանկցիաների կիրառման՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում:
2. Հաշվետվողականություն պետական մարմինների առջև (կախված պետական կառավարման համակարգից և տվյալ մարմնի՝ պետական համակարգում ունեցած կարգավիճակից՝ հաշվետվողականություն կարող է լինել գործադիր, օրենսդիր մարմիններին կամ դատարաններին):
3. Անկախ հաշվետվողականություն (օրինակ՝ քաղաքացիական հասարակությանը, մարդու իրավունքների ազգային մարմիններին, բողոքների քննող այլ հատուկ մարմինների): Այս մեխանիզմը հայտնի է նաև որպես հասարակական վերահսկողություն: Հասարակական վերահսկողությունը ենթադրում է ոչ միայն իրավապահ մարմնի կողմից հասարակական վերահսկողության առկայության փաստի ընդունում, այլև հանրության մոտ այնպիսի ընկալման ձևավորում, որ առկա են իրավապահ մարմինների գործողությունների և խախտումների առնչությամբ հաշվետվողականության արդար և թափանցիկ մեխանիզմներ:⁸⁹

Հասարակական վերահսկողության շատ մարմիններ օժտված են իրավապահ մարմինների դեմ բերվող բողոքներ քննելու իրավասությամբ, սակայն նրանց իրավասության շրջանակը կարող է էականորեն տարբերվել միմյանցից. այն կարող է սահմանափակվել միայն իրավախախտման մասին բարձրաձայնելով, իսկ որոշ համակարգերում ենթադրել ընդհուպ մինչև սանկցիաների կիրառում⁹⁰: Հասարակական վերահսկողության այդ մարմինները անկախ քննություն անցկացնելու համար պետք է ունենան բավարար պաշտպանության երաշխիքներ⁹¹:

⁸⁹J. Miller, *Civilian oversight of policing: lessons from the literature* (New York, Vera Institute of Justice, 2002); Քաղաքացիական վերահսկողության դերը ընդգծվել է նաև ՄԱԿ-ի կողմից անվտանգության մարմինների առնչությամբ <https://www.refworld.org/docid/47b1c33a2.html>

⁹⁰Ժողովրդավարական ոստիկանական գործունեության ուղեցույց, ԵԱՀԿ (2008), կետ 85(<https://www.osce.org/files/f/documents/5/3/23804.pdf>):

⁹¹ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, *Ազգային կառույցների մասին Փարիզյան սկզբունքներ* (<https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/StatusOfNationalInstitutions.aspx>):

Պետք է նշել, որ ն՛ ներքին, ն՛ արտաքին համակարգերն ունեն իրենց առավելություններն ու թերությունները, իսկ հաշվետվողականության առավել արդյունավետ համակարգ կարելի է ապահովել այդ երկուսի փոխլրացմամբ: Հաշվետվողականության ներքին համակարգերի առավելություններից կարելի է առանձնացնել այն, որ ներքին համակարգերը առավել լավ պատկերացում ունեն խախտումների պատճառների և դրանց վերացման լավագույն միջոցների մասին, որոշ դեպքերում ունեն քննություն իրականացնելու առավել մեծ հնարավորություն⁹²: Սակայն բողոքների քննության այդպիսի համակարգերն ունեն նաև բացասական կողմեր, որոնցից կարելի է նշել, օրինակ, իրավախտումները քողարկելու, համակարգում թերությունների մասին տեղեկության տարածումը կանխելու հավանականությունը⁹³:

Մյուս կողմից, արտաքին համակարգերի առավելություններից են հանրության մոտ առավել բարձր վստահությունը դրանց նկատմամբ, ինստիտուցիոնալ հնարավոր ազդեցությունից զերծ լինելը:⁹⁴

Դիտարկելով պետական մարմինների համակարգում Կոմիտեի կարգավիճակը, գործունեությունը կարգավորող վերաբերելի դրույթները, ինչպես նաև Կոմիտեի գործելաճը՝ կարելի է նշել, որ Կոմիտեի հաշվետվողականությունն ապահովվում է միաժամանակ հաշվետվողականության վերոնշյալ ներքին և արտաքին մի քանի մեխանիզմների համակցությամբ:

1. Ներքին հաշվետվողականություն

Կոմիտեում ներքին հաշվետվողականությունը ապահովվում է համակարգում ներքին զեկուցման և ներքին կարգապահական արդյունավետ համակարգերի միջոցով:

Կոմիտեի՝ որպես հիերարխիկ հարաբերությունների վրա հիմնված կառույցի աշխատանքների համակարգումը և արդյունավետ կազմակերպումը պահանջում է քննվող գործերի, կատարվող գործողությունների մասին տեղեկությունների փոխանցում վերադաս քննիչներին՝ վերջիններիս կողմից աշխատանքի

⁹² Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջ 14:

⁹³ Տեւ, օրինակ, DCAF, Ոստիկանական համակարգում բարեվարքության վերաբերյալ ձեռնարկ (2019), էջեր 164-165; DCAF, *Պառլամենտի դերը ոստիկանական կառավարման համատեքստում. Դասեր Ասիայից և Եվրոպայից*, (DCAF 2017), էջեր 124-

127(dcaf.ch/sites/default/files/publications/documents/The_Role_of_Parliament_in_Police_Governance.pdf):

⁹⁴ Ոստիկանական համակարգի հաշվետվողականության մասին զեկույց (ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ, 2011), էջ 14:

արդյունավետ կազմակերպման համար: Այս նպատակով Կոմիտեում գործում են ներքին զեկուցումների համակարգեր, որոնք, կախված զեկուցվող ինֆորմացիայի տեսակից, կարգավորվում են Կոմիտեի նախագահի առանձին հրամաններով: Դրանց թվում են, օրինակ, Կոմիտեի նախագահի հանձնարարականը՝ առանձնապես ծանր, հասարակական հնչեղություն ունեցող և այլ հանցագործությունների դեպքերը զեկուցելու վերաբերյալ,⁹⁵ Կոմիտեի նախագահի հանձնարարականը՝ Կոմիտեի վարույթում քննվող քրեական գործերի մասին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ,⁹⁶ Կոմիտեի նախագահի հանձնարարականը՝ հետաքննության մարմինների կողմից հարուցված և Կոմիտեի վարույթում կարճված քրեական գործերի մասին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ,⁹⁷ Կոմիտեի նախագահի հանձնարարականը՝ վարույթում քննվող քրեական գործերի մասին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ,⁹⁸ Կոմիտեի նախագահի հանձնարարականը՝ Կոմիտեի վերահսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների աշխատանքները պատշաճ կազմակերպելու, նախաքննության ընթացքում թույլ տրված թերությունները հնարավոր սեղմ ժամկետում հայտնաբերելու և վերացնելու վերաբերյալ⁹⁹: Չեկուցման այսպիսի ընթացակարգերը ենթադրում են առանձին քննիչների՝ իրենց վերադասին հաշվետվողականությունը: Չեկուցման վերաբերյալ պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը հաճախ քննության է առնվում կարգապահական վարույթների շրջանակներում, ինչը՝ որպես ներքին հաշվետվողականության առանձին մաս, ներկայացվելու է ստորև:

Քննչական համակարգում քննչական բաժնի պետը պատասխանատու է իրեն ենթակա քննիչների աշխատանքի և նախաքննության արդյունավետ կազմակերպման համար: Քննչական բաժնի պետը պատասխանատու է համապատասխան ստորաբաժանման աշխատանքների կազմակերպչաիրավական ապահովումն իրականացնելու, քննիչների կողմից գործողությունների ժամանակին կատարմանը, Կոմիտեի ներքին կանոնների պահպանմանը հետևելու համար: Քննիչների կողմից նշյալ լիազորությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել ինչպես քննիչի, այնպես էլ քննչական բաժնի պետի պատասխանատվության այն դեպքերում, երբ առկա են վերջինիս հսկողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում

⁹⁵<http://investigative.am/news/view/handznarakan-arandznapes-canr-gorceri-zekucum.html>:

⁹⁶<http://investigative.am/news/view/handznarakan-1691.html>

⁹⁷<http://investigative.am/news/view/handznarakan-hetaqnnutyam-marmnum-harucvac-ev-gk-um-karchvac-gorcer.html>

⁹⁸<http://investigative.am/news/view/handznarakan-qrgorceri-masi-texekatvutyam-tramadrman-masin.html>

⁹⁹<http://investigative.am/news/view/inkorporacia-168-l-handznarakan.html>

և օրենքի իմաստով կոպիտ խախտման հատկանիշներ¹⁰⁰: Այսպիսով, քննիչները առաջին հերթին հաշվետու են իրենց ստորաբաժանման ղեկավարին, պարտավոր են հետևել վերջինիս ցուցումներին աշխատանքի կազմակերպման, քննության իրականացման ընթացքում անհրաժեշտ գործողությունների՝ օրենքի հիման վրա և ժամանակին կատարման առնչությամբ:

Ներքին հաշվետվողականության մաս են կազմում նաև ներքին կարգապահական պատասխանատվության մեխանիզմները: Կոմիտեի քննիչների կողմից ենթադրյալ իրավախախտումների տարրեր պարունակող արարք կատարելու հարցերով քննության և որոշման կայացման ընթացակարգին մասնակցում են Կոմիտեի կենտրոնական մարմնի ներքին անվտանգության վարչությունը (այսուհետ՝ ՆԱՎ) և Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը:

ՆԱՎ-ի ծառայողները քննիչներ են՝ 5 քննիչ, ներառյալ՝ վարչության ղեկավարը: Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է ՆԱՎ-ի ծառայողի կողմից՝ անմիջական վերադասի ղեկավարությամբ:¹⁰¹ Մասնագիտական և անհատական հատկանիշների տեսանկյունից պետք է նշել, որ ՆԱՎ-ի ծառայողները ըստ էության իրականացնում են իրավախախտումների քննություն և հետևաբար պետք է լինեն պատրաստված, ունենան համապատասխան հատկանիշներ այդ լիազորությունն իրականացնելու համար:¹⁰² Խորհուրդ է տրվում այդպիսի ստորաբաժանումներում նշանակել երկար տարիների փորձ ունեցող առաջատար մասնագետների, որոնք ունեն բարձր հեղինակություն: Այդ անձինք ոչ միայն պետք է օրինակ ծառայեն մնացածի համար, այլև համակարգում վստահություն վայելեն, լինեն այնպիսի անձինք, ում կողմից բարձրացվող հարցերը, առաջարկվող լուծումները առավել վստահությամբ կընդունվեն աշխատակիցների կողմից:

ՆԱՎ-ի գործունեությունն ուղղված է, առաջին, ամրապնդելու ծառայողական կարգապահությունը, և երկրորդ, կանխարգելելու, հայտնաբերելու, խափանելու և

¹⁰⁰Տե՛ս, օրինակ, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշում թիվ ԿՀՈ13 (2016թ.), ԿՀՈ 33 (2017թ.),

¹⁰¹ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ ՀՀ քննչական կոմիտեում ծառայողական քննություն անցկացնելու նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը հաստատելու մասին 2018թ. Մեպտեմբերի 5-ի թիվ 147-Լ հրաման (<http://investigative.am/news/view/carayoxakan-qnnutyun-anckacnelu-karg-hraman.html>):

¹⁰²Օրինակ՝ ԵԱՀԿ-ն առաջարկում է ներքին ուսումնասիրության բաժիններում նշանակել այն ծառայողներին, որոնք պատրաստ են այդ գործառնություն իրականացնելու: Նրանք պետք է տվյալ իրավապահ մարմնում հարգանք վայելող անձինք լինեն, ունեն միջհաղորդակցության լավ կարողություններ, հսկողություն իրականացնելու փորձ, լինեն ազնիվ, օբյեկտիվ: Կարևոր է, որ նրանք ունենան քննություն իրականացնելու այնպիսի կարողություններ, ինչպիսիք անհրաժեշտ է քրեական քննություն իրականացնելու համար:

բացահայտելու Կոմիտեի քննիչների կողմից թույլ տված կարգապահական խախտման դեպքերը: Այդ խնդիրներն իրականացնելու համար ՆԱՎ-ին վերապահված են հետևյալ լիազորությունները, մասնավորապես՝ (1) կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ նախնական ուսումնասիրության իրականացում և կարգապահական հանձնաժողովին համապատասխան եզրակացության տրամադրում, (2) կարգապահական խախտման հանգամանքների լրիվ, համակողմանի և օբյեկտիվ քննության իրականացում՝ օրենքով նախատեսված դեպքերում, (3) առանձին հարցերով ուսումնասիրությունների իրականացում, (4) կարգապահական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանն աջակցում, հանձնաժողովի որոշումների նախագծերի կազմում, (5) կարգապահական խախտումներ ծնող պատճառների ու նպաստող պայմանների վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում Կոմիտեի նախագահին:

Նախնական ուսումնասիրության արդյունքում կազմվում է եզրակացություն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին, և հարուցելու դեպքում կարգապահական վարույթն իրականացնում է Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը:¹⁰³

2. Հաշվետվողականություն պետական մարմինների առջև

Պետական մարմիններին հաշվետվողականությունը ինքնին չի բացառում իրավապահ մարմինների ինքնուրույնությունը իրենց լիազորություններն իրականացնելիս և որոշումներ կայացնելիս:

Ա. Հաշվետվողականություն օրենսդիր մարմնին

Պետական մարմինների շարքում առաջին հերթին առանձնացվում է օրենսդիրը: Օրենսդիր մարմնի առջև հաշվետվողականություն իրականացվում է, առաջին հերթին, իրավապահ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքների ընդունման և դրանց փոփոխման, ինչպես նաև պառլամենտական հանձնաժողովների կամ օմբուդսմենի ինստիտուտների միջոցով, որոնք կարող են քննություն իրականացնել իրավապահ մարմինների դեմ հանրության ներկայացրած բողոքների

¹⁰³Կոմիտեի Կարգապահական հանձնաժողովի գործունեության, դրան առնչվող խնդիրների վերաբերյալ տեղեկությունների համար կարող էք տեսնել իրականացված առանձին հետազոտությունը: Հասանելի է prwb.am կայքէջում:

առնչությամբ:¹⁰⁴ Այսպես, օրենսդիրը հաշվետվողականությունը կարող է իրականացնել վերջինիս կողմից իր հետևյալ գործառույթների իրականացմամբ:¹⁰⁵

(1) **օրենսդրական՝** օրենսդրական դաշտի գնահատում, անհրաժեշտության դեպքում իրավապահ գործունեության տարբեր ուղղությունների վերաբերյալ կարգավորումների ընդունում, փոփոխում (օրինակ՝ իրավապահ մարմիններում ծառայություն, պատասխանատվության և վերահսկողության նոր մեխանիզմներ, քրեական վարույթի ընթացքում լիազորությունների շրջանակ, հատուկ միջոցների կիրառում և այլն),¹⁰⁶

(2) **վերահսկողական՝** իրավապահ մարմինների կողմից իրենց լիազորությունների պատշաճ իրականացման գնահատում, իրավապահ մարմիններում բարձրաստիճան ծառայողների նշանակումների ուսումնասիրում, պառլամենտական հատուկ քննությունների իրականացում կոնկրետ դեպքերի վերաբերյալ և այլն,

(3) **բյուջետային՝** իրավապահ մարմինների բյուջեների հաստատում, մերժում և փոփոխում, բյուջետային հատկացումներում փոփոխությունների՝ իրավապահ մարմինների գործունեության վրա ազդեցության գնահատում, իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության գնահատում՝ ֆինանսավորման բավարարության տեսանկյունից, բյուջեի կատարման գնահատում և անկախ մարմինների՝ բյուջեի կատարման աուդիտների գնահատում: Նշենք, որ յուրաքանչյուր տարի Կոմիտեն հանդես է գալիս ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների առջև (որպես կանոն Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի և ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովներում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության զեկույցի ներկայացմամբ):

Օրենսդիր մարմնի վերահսկողական դերը հատկապես կարևորվում է պառլամենտական երկրներում: Օրինակ՝ Գերմանիայում Ներքին գործերի նախարարության (քրեական գործերի քննություն իրականացնող ոստիկանական

¹⁰⁴ M. Caparini, O. Marenin, *Transforming Police in Central and Eastern Europe: Process and Progress* (Münster: LIT and DCAF, 2004), էջեր 5-9

(https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/transformpolice_caparini_marenin_EN.pdf):

¹⁰⁵ DCAF, *Պառլամենտի դերը ոստիկանական կառավարման համատեքստում. Դասեր Ասիայից և Եվրոպայից*, (DCAF 2017), էջ 10

([dcaf.ch/sites/default/files/publications/documents/The_Role_of_Parliament_in_Police_Governance.pdf](https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/The_Role_of_Parliament_in_Police_Governance.pdf)):

¹⁰⁶ Օրենսդրի կողմից են ընդունվել ՀՀ Քննչական կոմիտեի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթղթերը՝ Քննչական կոմիտեի մասին օրենքը, Քրեական դատավարության օրենսգրքը, որը սահմանում է քրեական գործի քննության ընթացքում Կոմիտեի ծառայողների լիազորությունները, ինչպես նաև Հանրային Օստայության մասին օրենքը, Քրեական օրենսգրքը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը:

ուժերը գտնվում են Ներքին գործերի նախարարության ենթակայության տակ) նկատմամբ Պառլամենտը իրականացնում է վերահսկողություն ռազմավարությունների մշակման և օրենսդրական գործառույթի իրականացման միջոցով, և թեև ոստիկանության կազմավորման, բարձր պաշտոններում նշանակումների, ինչպես նաև ռազմավարական գերխնդիրների սահմանումը կառավարության իրավասության շրջանակում է, Պառլամենտը իրազեկվում է այդ որոշումների մասին և կարող է դրանք քննարկել (օրինակ, Պառլամենտի մշտական հանձնաժողովներում)¹⁰⁷: Պառլամենտի մասնագիտացված մի քանի մշտական հանձնաժողովներ են գործում Բելգիայում, այն է՝ իրավապահ մարմինների ներքին գործերի հարցերով մշտական հանձնաժողովը, ոստիկանության մշտադիտարկման հանձնաժողովը. վերջինս կազմում է առանձին մշտադիտարկման արդյունքների մասին եզրակացություններ, ինչպես նաև տարեկան զեկույցներ, որոնք ուղարկում է պառլամենտի անդամներին:

Այս տեսանկյունից պետք է նշել, որ Կոմիտեն իր գործունեության մասին ՀՀ Ազգային ժողովին հաշվետվություն կամ հաղորդում ներկայացնելու պարտականություն չունի:

Այդպիսի պարտականություն է առկա միայն ՀՀ Կառավարության նկատմամբ:¹⁰⁸

ՀՀ Ազգային ժողովին Կոմիտեի հաշվետվողականությունը իրականացվում է բացառապես բյուջետային հայտերի հաստատման և բյուջեի կատարողականի քննարկման գործընթացներում:

Պառլամենտի հետ համագործակցության շրջանակներում պատգամավորների և Կոմիտեի ծառայողների մասնակցությամբ տարվա ընթացքում տեղի են ունենում նաև աշխատանքային հանդիպումներ, որոնք ուղղված են քննարկելու, օրինակ, առանձին տեսակի հանցագործությունների քննությունն առավել արդյունավետ իրականացնելուն առնչվող հարցեր,¹⁰⁹ օրենսդրական նախաձեռնություններ¹¹⁰ կամ ուղղված են քննարկելու Կոմիտեի ընդհանուր արդյունավետությանն առնչվող հարցեր:¹¹¹

Սակայն այդպիսի հանդիպումները պարտադիր բնույթ չեն կրում, ո՛չ Կոմիտեի, ո՛չ օրենսդրի անդամների համար, և քննարկված հարցերը հնարավոր է՝ օրենսդիր

¹⁰⁷DCAF, *Պառլամենտի դերը ոստիկանական կառավարման համատեքստում. Դասեր Ասիայից և Եվրոպայից*, (DCAF 2017), էջ 131

(dcaf.ch/sites/default/files/publications/documents/The_Role_of_Parliament_in_Police_Governance.pdf):

¹⁰⁸ Տե՛ս ստորև:

¹⁰⁹<http://investigative.am/news/view/handipum-moler.html>

¹¹⁰http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=29&month=08&year=2019&NewsID=11939&lang=arm;
http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=31&month=01&year=2018&NewsID=9909&lang=arm

¹¹¹http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=22&month=10&year=2019&NewsID=12198&lang=arm

մարմնի առավել լայն շրջանակի ուշադրությանը չներկայացվեն: Արդյունքում քննարկումները կարող են սահմանափակվել միայն խնդիրների բարձրաձայնամաբ՝ առանց դրանց լուծման ուղղությամբ որևէ քայլերի ձեռնարկմամբ կամ օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու: Մինչդեռ իրավապահ մարմինների հարցեր քննելու իրավասություն ունեցող մշտական հանձնաժողովի կողմից պարբերաբար քննարկումներ անցկացնելու պարագայում այդ հարցերը կզեկուցվեին պառլամենտին՝ առավել բարձրացնելով կոնկրետ քայլեր ձեռնարկելու հավանականությունը:

Բ. Հաշվետվողականություն կառավարությանը

Ինչպես նշվեց, Կոմիտեն անմիջականորեն հաշվետու է ՀՀ Կառավարությանը: ՔԿՕ 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ Կոմիտեն յուրաքանչյուր տարի հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին և Կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 31-ը, Կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ Կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին: Ստացվում է, որ Կոմիտեն հաշվետու է միայն Կառավարությանը՝ Կառավարությանը ներկայացվող տարեկան հաղորդմամբ: Սակայն հստակ չէ, թե հաղորդումը Կառավարության կողմից ուսումնասիրության ինչպիսի ընթացակարգ է անցնում, ինչպիսի վերլուծության է ենթարկվում հաղորդումը և արդյոք վերհանվում են հնարավոր խնդիրներ՝ դրանց համապատասխան արձագանք կազմակերպելու նպատակով: Սահմանված չէ նաև հաղորդման քննարկման հանրային ընթացակարգ, որի շրջանակներում Կոմիտեին հարցեր կուղղվեն տարեկան գործունեության վերաբերյալ, կվերհանվեն հնարավոր խնդիրները:¹¹²

Գ. Հաշվետվողականություն դատախազությանը. դատական երաշխիքներ

Որպես քրեական գործերով քննություն իրականացնող հիմնական մարմին՝ Կոմիտեի քննիչներն օժտված են քննչական գործողություններ կատարելու լայն լիազորություններով, որոնք պետք է իրականացվեն քրեադատավարական սկրյունքների և կանոնների, մարդու իրավունքների հարգմամբ և պահպանմամբ: Այս տեսանկյունից դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունն ուղղված են ապահովելու մի կողմից քննություն իրականացնող քննիչների

¹¹²Ինչը իրականացվում է այլ անկախ մարմինների, օրինակ, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առնչությամբ:

գործողությունների իրավաչափություն և մյուս կողմից՝ կանխելու և վերացնելու կամայական միջամտություն նրանց լիազորությունների իրականացմանը: Պետք է նշել, որ որպես քրեական գործով քննություն իրականացնող մարմին՝ քննիչը գործում է ինքնուրույն, սակայն լիարժեք անկախ չէ հսկող դատախազից և քննչական մարմնի ղեկավարից, հաշվի առնելով այն, որ վերջիններս ունեն քննիչին ցուցումներ տալու իրավունք:¹¹³ Սույնով պայմանավորված՝ քրեական վարույթի հանրային մարմինների լիազորությունների հստակ տարանջատումը, պատասխանատվության շրջանակների հստակեցումը ինքնուրույնության առաջնային երաշխիքներից են: Հետևաբար, կարևոր է, որ քննիչների և դատախազների կոնկրետ լիազորությունները սահմանվեն այնպես, որ մի կողմից հնարավորություն ապահովվի լիարժեք իրականացնելու իրենց գործառույթները, և մյուս կողմից չլինի լիազորությունների համընկնում՝ հանգեցնելով անհարկի միջամտության քննիչների լիազորությունների կատարման նկատմամբ և անհնար դարձնելով դրանց արդյունավետ իրականացումը:

Գործող ՔԴՕ-ի նորմերի կիրառության վերլուծության արդյունքում առանձնացվել են մի շարք խնդիրներ, որոնք առաջանում են դատախազների և քննիչների պատասխանատվության ոլորտների ոչ միանշանակ տարանջատման արդյունքում: Այդպիսի խնդիրներ առաջանում են, օրինակ, քննիչի և դատախազի լիազորությունների մասով քրեական գործի վարույթը կարճելու և մեղադրյալին կալանքից ազատելու առնչությամբ, երբ գործնականում լինում են իրավիճակներ, երբ քննիչը զրկվում է քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու լիազորությունն ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից այն դեպքերում, երբ կարճման ենթակա քրեական գործով մեղադրյալը գտնվում է կալանքի տակ: ՔԴՕ 261-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման եզրափակիչ մասում շարադրվում են կարճելու հիմքերը, օրենքի նորմը, որի հիման վրա կայացվում է որոշումը, խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ հարցերը: Ստացվում է, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալի վերաբերյալ գործերով քննիչն իրավասու է ինքնուրույն կարճել վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը, միաժամանակ՝ նա այդ իրավունքից չի կարող օգտվել, քանի որ կարճելու որոշման

¹¹³Ա. Հովսեփյան, Ա. Թամազյան, Ա. Ղամբարյան, Վ. Շահնազարյան, *Քրեական վարույթի հանրային մասնակիցների փախհարարելությունները*, Երևան 2015, էջեր 21-22:

մեջ պետք է վերացնի նաև կալանքը, իսկ կալանքը վերացնելու իրավասություն վերապահված է դատախազին:¹¹⁴

Ինչ վերաբերում է դատախազի ցուցումներին, ապա պետք է հաշվի առնել, որ քննիչն իր վարույթում գտնվող քրեական գործի շրջանակներում ինքնուրույն է որոշում այս կամ այն փաստական տվյալը ձեռք բերելու համար առավել նպատակահարմար քննչական գործողության տեսակը: Այս առումով՝ դատախազը ցուցումում պետք է սահմանի, թե ինչ փաստական տվյալներն են անհրաժեշտ իր սահմանադրական գործառույթները և լիազորություններն իրականացնելու համար, իսկ այդ փաստական տվյալների ձեռք բերման եղանակը որոշում է քննիչը:¹¹⁵ Այսպիսով ապահովվում է ն՝ դատախազական հսկողությունը, ն՝ հարգվում է քննություն կատարելիս քննիչի ինքնուրույնությունը:

Նմանատիպ խնդիրների անդրադարձ է կատարվել նաև կարգապահական վարույթների շրջանակներում: Խնդիրներ են բարձրացվել նաև գործող իրավաբանների, փաստաբանների կողմից, որոնց պնդմամբ՝ քննիչները խոսակցության ժամանակ ընդունել են, որ մեղադրանքը ոչ հիմնավոր կամ թույլ է, որ գործը դատարան տանելու ահրաժեշտությունը բացակայում է, սակայն միևնույն ժամանակ նշել, որ «պետք է տանեն»:¹¹⁶ Ստացվում է, որ կարող են լինել իրավիճակներ, երբ քննիչը քննության արդյունքում չձևավորի ներքին համոզմունք և ապացույցների բավարար համակցություն մեղադրանքը հիմնավորելու համար, սակայն ինչ-որ հանգամանքներով պայմանավորված՝ ստիպված լինի անել դա: Արդյունքում, պրակտիկայում ողջամտորեն կասկածներ են առաջանում քննիչի ինքնուրույնությանը միջամտության առնչությամբ:

Նշենք, որ քրեական դատավարության նոր օրենսգրքով¹¹⁷ լուծման ենթակա հիմնական խնդիրներից է դատավարական իրավահարաբերությունների և գործողությունների հիմքում գործառութային տարանջատման սկզբունքի ներդրումը, վարույթի մասնակիցների համար բացառապես նրանց դերից, նշանակությունից և կարգավիճակից բխող գործառույթների և լիազորությունների սահմանումը:

¹¹⁴Ա. Հովսեփյան, Ա. Թամազյան, Ա. Ղամբարյան, Վ. Շահնագարյան, *Քրեական վարույթի հանրային մասնակիցների փախհարաբերությունները*, Երևան 2015, էջեր 39-40:

¹¹⁵Նույն տեղում, էջ 24:

¹¹⁶Հարցազրույց փաստաբանի հետ:

¹¹⁷Քրեական դատավարության նոր օրենսգրքը 2021թ. հունիսի 30-ին ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից և 2021թ. հունվարի 27-ին ստորագրվել ՀՀ նախագահի կողմից:

Հետևաբար, օրենսգրքով փորձ է կատարվել հստակեցնել, տարանջատել և ներդաշնակեցնել մինչդատական վարույթին մասնակցող պաշտոնատար անձանց (դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննիչ) գործառույթները, ապահովել գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի օրգանական ամբողջականությունը և լիարժեքությունը:¹¹⁸ Գործառույթների և հետևաբար լիազորությունների այսպիսի տարանջատումը նպաստում է քննիչների ինքնուրույնության ամրապնդմանը քննչական վարույթի շրջանակներում:

Մասնավորապես, օրենսգրքով ընդգծվում է քրեական վարույթի հանրային մասնակիցների՝ իրենց լիազորություններն իրականացնելիս ինքնուրույնությունը և առաջարկվում է հստակեցնել նրանց պատասխանատվության ոլորտները:¹¹⁹ Այսպիսի մոտեցումը առավել կհստակեցնի քննիչի հաշվետվողականության սահմանները՝ մի կողմից դատախազի, մյուս կողմից քննչական բաժնի պետի առջև:

3. Հաշվետվողականություն անկախ մարմիններին

Հասարակական վերահսկողության շրջանակներում առանձնացվում են հիմնականում հաշվետվողականության անկախ մարմինները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները, որոնք բարձրաձայնում են իրավապահ մարմինների կողմից իրավախախտումների փաստերի մասին: Իրավապահ մարմինների լիարժեք հաշվետվողականությունն ապահովելու համար պետությունները պետք է բավարար հնարավորություն ստեղծեն քաղաքացիական հասարակության մասնակցության համար: Պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ, քաղաքացիական հասարակության, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում ակտիվ մասնակցությանը նպաստելու համար, և այդ մասնակցությունը պետք է ամրապնդվի այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են թափանցիկության ուժեղացումը և որոշումների ընդունման գործընթացներում հասարակության ներգրավմանն աջակցումը, բնակչության համար

¹¹⁸<https://www.e-draft.am/projects/2085/justification>

¹¹⁹ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, հոդված 35 (http://www.parliament.am/reading1_docs7/K-637_R1.pdf):

տեղեկատվության հասանելիության արդյունավետ միջոցների ապահովումը, հանրության տեղեկացվածության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը¹²⁰:

Հաշվետվողականության համակարգերի շարքում որպես լավագույն փորձի օրինակներ են ներկայացվում հասարակական վերահսկողության անկախ մարմինները¹²¹: Հասարակական վերահսկողության անկախ մարմինները, որպես կանոն, քննում են ոստիկանության, իրավապահ մարմինների դեմ բողոքներ, որոնք կարող են ներկայացվել նաև հասարակության ցանկացած անդամի կողմից: Այդ մարմիններն անկախ են և պետական համակարգի մաս չեն կազմում:

ՀՀ-ում նմանատիպ գործառույթ իրականացնող անկախ մասնագիտացված մարմիններ առկա չեն: Սակայն այդպիսի դերակատարում ունի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ ՄԻՊ)¹²²՝ անկախ պաշտոնատար անձ, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը¹²³: Իր լիազորություններն իրականացնելիս ՄԻՊ-ը սեփական նախաձեռնությամբ կամ բողոքի առկայության դեպքում քննարկում է պետական մարմինների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ բողոքները, իրականացնում ուսումնասիրություններ, վերհանում առկա խնդիրները և միջոցառումներ ձեռնարկում դրանց լուծմանն ուղղությամբ¹²⁴: Ստացվում է, որ ՄԻՊ-ը կարող է իրականացնել նաև Կոմիտեի առնչությամբ քննարկումներ, ինչի արդյունքում կարող են կայացվել, ի թիվս այլնի, նաև խախտման մասին որոշումներ¹²⁴: ՄԻՊ-ի կայացված որոշումները, որպես կանոն, չեն հրապարակվում, սակայն տեղեկություններ հրապարակվում են տարեկան զեկույցներում: Օրինակ, ՄԻՊ 2016թ. տարեկան զեկույցում նշվել է Կոմիտեի դեմ 247 դիմում-բողոքների ստացման մասին¹²⁵:

¹²⁰ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, Հոդված 13

¹²¹Օրինակներ, IOPC՝ Մեծ Բրիտանիայում, Rijksoverheid՝ Նիդերլանդներում, African Oversight Civilian Forum՝

¹²²Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1:

¹²³Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենք, հոդված 15:

¹²⁴Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենք 26, մաս 1:

¹²⁵Մյուս հաղորդումներում հստակ քանակ կամ այլ տեղեկություն Կոմիտեի դեմ բողոքների մասին նշված չէ:

Նշենք, որ բացի դիմում-բողոքների քննությունից ՄԻՊ-ը նաև հրապարակային հայտարարություններով է հանդես եկել Կոմիտեի՝ մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց գործողությունների առնչությամբ: Որպես օրինակներ կարելի է նշել ՄԻՊ-ի հայտարարությունը լրագրողներին հարցաքննության կանչելու դեպքի առնչությամբ՝ զգուշացնելով, որ Կոմիտեի գործողությունները գտնվում են ՄԻՊ-ի անմիջական դիտարկման ներքո, իսկ այդ դեպքում հայտարարել քրեական վարույթի ընթացքի նկատմամբ խիստ հետևողականություն դրսևորելու մասին:¹²⁶ Կարելի է պնդել, որ այդպիսի հայտարարությունները առավել զգոնություն են հաղորդում Կոմիտեի քննիչներին իրենց գործողություններում: Ավելին, ՄԻՊ-ը նաև հարցադրումներ է ուղարկում Կոմիտե, ստանում պարզաբանումներ հարուցված քրեական գործերի, կատարված քննչական գործողությունների վերաբերյալ, հատկապես երբ առկա են մտահոգություններ անձի առողջական վիճակին համապատասխան խափանման միջոցի կիրառման վերաբերյալ:¹²⁷

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է եզրահանգել, որ ՀՀ Ազգային ժողովը ուղղակի գործունեության վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմ ՀՀ քննչական կոմիտեի նկատմամբ չունի: Ազգային ժողովին հաշվետվողականությունը սահմանափակվում է միայն Կոմիտեի բյուջետային հատկացումների հաստատման և կատարողականի քննարկման շրջանակներում: Պրակտիկայում տեղի են ունենում քննարկումներ պատգամավորների խմբերի կամ հանձնաժողովների մասնակցությամբ, ինչը, սակայն, համակարգային բնույթ չի կրում և ուղղված չէ կոնկրետ հարցերի շուրջ քննարկումների անհրաժեշտությամբ:

Ըստ օրենքի՝ Կոմիտեն իր գործունեության տարեկան հաղորդում ներկայացնում է բացառապես կառավարությանը: Այդուամենայնիվ, հաղորդումը քննարկելու կառուցակարգ օրենքը չի նախատեսում:

¹²⁶<https://ombuds.am/am/site/ViewNews/939>; <https://ombuds.am/am/site/ViewNews/1105>

¹²⁷<https://ombuds.am/am/site/ViewNews/687>

Թափանցիկություն

Թափանցիկությունը պահանջում է պետական մարմինների գործունեության մասին տեղեկությունների հրապարակում, որոնք պետք է լինեն վստահելի, հասանելի, որակյալ, հրապարակումը պետք է լինի ժամանակին, իսկ հրապարակված տեղեկությունը՝ հասկանալի¹²⁸: Թափանցիկությունը ենթադրում է նաև այնպիսի միջավայրի առկայություն, որտեղ պետական մարմինների ռազմավարական նպատակները, նրանց իրավական, ինստիտուցիոնալ և տնտեսական կառուցակարգերը, կայացվող որոշումները և որոշումների հիմքում դրված հիմնավորումները, դրամական և ֆինանսական քաղաքականությանը վերաբերող տվյալների մասին տեղեկությունները, հասանելի և հասկանալի են հասարակությանը և տրամադրվում են ժամանակին¹²⁹:

Թափանցիկություն կարող է լինել ակտիվ և պասիվ. պասիվի դեպքում տեղեկությունները տրամադրվում են դիմումի/հարցման հիման վրա, իսկ ակտիվի դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ: Նշենք, որ Կոմիտեի դեպքում նախատեսված են նշված երկու տեսակներն էլ, սակայն այլ հարց է գործնականում դրանց արդյունավետությունը, ինչին անդրադարձ է կատարվում ստորև:

ՔԿՕ 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և ծառայողական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությունը: Թափանցիկության պահանջը պետք է վերաբերի նաև Կոմիտեի գործունեության տարբեր ուղղություններին, ներառյալ՝ Կոմիտեի քննիչների ներգրավման գործընթացին (այն է՝ ընդունելության հայտարարությունների տարածումը, ուսման վերաբերյալ տվյալների, պահանջների, գնահատման չափանիշների հստակությունը, որակավորման հանձնաժողովի կազմի վերաբերյալ տեղեկություններ),¹³⁰ կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացներին վերաբերող հարցեր (կարգապահական հանձնաժողովի

¹²⁸ N. Zúñiga, M. Jenkins, D. Jackson, *Does more transparency improve accountability?* (Transparency International 2018), Էջ 2:

¹²⁹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, եզրույթների բառարան (<https://stats.oecd.org/glossary/detail.asp?ID=4474>):

¹³⁰ Այս մասին՝ Բաժին 1-ին:

ձևավորում, կարգապահական վարույթի թափանցիկություն, կարգապահական պատասխանատվության հիմքերի որոշակիություն):

Կոմիտեի գործունեության թափանցիկությունը ապահովվում է հետևյալ կերպ. (1) Կոմիտեի գործունեության մասին տարեկան հաղորդումների՝ կայքում, ինչպես սոցիալական հարթակներում հրապարակմամբ, (2) Կոմիտեի կայքի «Նորություններ» դաշտում քրեական գործերի մասին տեղեկության հրապարակմամբ, (3) Կոմիտեին ուղղված հարցումներին պատասխաններով, (4) Կոմիտեի բյուջետային հայտերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմամբ, ինչպես նաև բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողով տեղեկության ներկայացմամբ:

Սակայն, վերոնշյալ եղանակներով ապահովվում է միայն հատվածական թափանցիկություն:

Այսպես, **տարեկան հաղորդումներում** տրամադրվում են առաջին հերթին վիճակագրական տվյալներ Կոմիտեի գործունեության տարբեր ուղղությունների վերաբերյալ (Կոմիտեի վարույթում քննված գործերի քանակ, քննիչների միջին ծանրաբեռնվածություն, արձանագրված առանձին տեսակի հանցագործությունների թիվ, բացահայտված հանցագործությունների թիվ, հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափ, վերականգնված վնասի չափ, Ներքին անվտանգության վարչության կողմից ուսումնասիրությունների վերաբերյալ քանակական տվյալներ, հարուցված կարգապահական վարույթների և կիրառված կարգապահական տույժերի թվի մասին տեղեկություններ, պետական մարմիններից, ՀԿ-ներից, ՋԼՄ-ներից և ֆիզիկական անձանցից ստացված գրությունների և հարցումների քանակական տվյալներ): Բացի վիճակագրական տվյալներից հաղորդվում են նաև այլ տեղեկություններ, օրինակ, Կոմիտեի մշակված օրենսդրական նախագծերի, Կոմիտեի կողմից այլ պետությունների հետ համագործակցության համաձայնագրերի, դրանց շրջանակում իրականացված գործողությունների մասին վիճակագրական տվյալների, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող ծրագրի շրջանակում կատարված գործողությունների վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է պնդել, որ հաղորդմամբ տրամադրվում է Կոմիտեի գործողության բոլոր ուղղությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, իսկ լրացուցիչ, առավել մանրամասն տեղեկություններ պետք է հնարավոր լինի ստանալ

արդեն հարցումների միջոցով: Այլ խնդիր է, թե ինչպես է Կոմիտեն պատասխանում հարցումներին. արդյո՞ք լիարժեք տրամադրվում է հարցմամբ պահանջված տեղեկությունը: Նշենք, որ հետազոտության շրջանակում Կոմիտեին ուղղված մի շարք հարցումներին տրվել են ընդհանրական պատասխաններ, ինչի արդյունքում հնարավոր չի եղել ստանալ սպառիչ տեղեկություններ անհրաժեշտ հարցերի վերաբերյալ:

Այլ խնդիր է նաև, թե արդյոք հաղորդումները Կառավարությանը ներկայացնելու միջոցով դրանք պատշաճ քննարկվում են վերջինիս կողմից՝ Կոմիտեի խնդիրները վերհանելու և դրանց լուծում տալու նպատակով: Նվազագույնը բյուջետային հայտերի մասով առարկություններ ունենալու դեպքում Կառավարությունը Ազգային ժողով և Կոմիտե է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումներ (բյուջետավորման գործընթացի մասին առավել մանրամասն՝ ստորև):¹³¹ Իսկ տարեկան հաղորդումների դեպքում միայն նշվում է, որ Կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 31-ը, Կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ Կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին,¹³² որևէ առանձին կարգավորում չկա այդ հաղորդումը քննարկելու, վերլուծելու պահանջի և դրանում բարձրացված խնդիրներին հետևողական լինելու կապակցությամբ:

Ինչ վերաբերում է **կայքում հրապարակվող տեղեկություններին**, դրանք բազմազան են, վերաբերում են Կոմիտեի կողմից քննվող գործերին, ենթադրյալ նոր հանցագործությունների դեպքերի, տարբեր պետական մարմինների հետ աշխատանքային հանդիպումների, մասնավոր անձանց հետ քննարկումների, միջազգային գործընկերների հետ հանդիպումներին և ձեռք բերված պայմանավորվածությունների: Սակայն պետք է նշել, որ հստակ չէ, թե ինչ սկզբունքներով է որոշվում այն քրեական գործերի շրջանակը, որոնց մասին Կոմիտեն նպատակահարմար է համարում տեղեկություն հրապարակել. արդյո՞ք դրանք հանրային հետաքրքրություն ներկայացնող գործերն են, առավել բարձր հասարակական վտանգավորություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ գործերը, թե դրանք ընտրվում են միայն պատահականության սկզբունքով: Ավելին, կայքում տեղադրված տեղեկությունները վերաբերում են միայն դեպքերի և քրեական գործերի առանձին դրվագների, այսինքն՝ հրապարակվող նյութը նպատակ է հետապնդում

¹³¹ՔԿՕ հոդված 47, մաս 2:

¹³²ՔԿՕ հոդված 8, մաս 3:

կամ տեղեկացնելու հանցագործության դեպքի մասին, մինչդաստական վարույթի ելքի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման մասին, և գործերի մեծամասնության դեպքում տեղեկությունը սահմանափակվում է միայն այդպիսի առանձին հրապարակմամբ՝ առանց գործի վերաբերյալ հետագա թարմացումների: Այսպիսով, հնարավոր չէ միանշանակ պնդել, որ կայքում առկա տեղեկությունը ապահովում է Կոմիտեի գործունեության թափանցիկության անհրաժեշտ մակարդակ:

Պետք է նշել նաև, որ քրեական գործերի քննության թափանցիկությունը կարող է ապահովվել այնքանով, որքանով այն չի բացահայտում նախնական քննության գաղտնիք, քանի որ նախնական քննության տվյալներ կարող է հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:¹³³

Այսպիսով, Կոմիտեի գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը չի ապահովում թափանցիկության բավարար մակարդակ:

¹³³ ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 201-րդ հոդված:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ռեսուրսների ներգրավումը, բյուջետային հայտերի կազմումը

Իրավապահ մարմինների անկախության, ինչպես նաև գործունեության արդյունավետության կարևոր բաղադրիչ է ֆինանսական ինքնուրույնությունը, քանի որ ոչ բավարար ֆինանսական միջոցները կարող են հանգեցնել գործունեության կաշկանդման, սահմանափակման և արդյունավետության նվազման: Ֆինանսական ռեսուրսների բաղադրիչներ են կազմում աշխատակիցների բավարար վարձատրությունը, անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը և ֆինանսական ինքնուրույնությունը,¹³⁴ և միջազգային փորձագետների կողմից առանձնացվում են բյուջետային անկախությանն ուղղված երաշխիքներ, որոնց ներկայացվելու են ստորև Կոմիտեի բյուջետավորման համատեքստում:

Առաջին հերթին կարևոր է, որ օրենքով նախատեսված լինեն նվազագույն բյուջետային երաշխիքներ՝ բացառելու հնարավոր կամայական միջամտությունները տվյալ մարմնի գործունեությանը ֆինանսավորման փոփոխությունների միջոցով: Այդպիսի նվազագույնի սահմանումը կարող է արտահայտվել ընդհանուր բյուջեի որոշակի նվազագույն տոկոսի չափով հատկացումներ անելու պահանջի սահմանմամբ, ինչը ուղղված կլինի ապահովելու տվյալ մարմնի ֆինանսավորման կայունությունը¹³⁵: Իսկ արդյունավետ գործունեություն ապահովելու համար ցանկալի է բյուջետային հատկացումների տրամադրում պարբերական ինտերվալներով, նախընտրելի է՝ տարվա սկզբում¹³⁶:

Այնուհետև, անհրաժեշտ է բավարար թվով աշխատակիցների ներգրավում, և նրանց պատշաճ վարձատրություն: Աշխատակիցների թվի բավարարությունը գնահատվում է մի շարք գործոններով, ներառյալ՝ տվյալ մարմնին վերապահված իրավասության շրջանակով, իսկ բավարար վարձատրությունն ուղղված է ապահովելու բարձր որակավորում ունեցող անձանց համար տվյալ կառույցում աշխատանքը գրավիչ դարձնելու և բարձր որակավորում ունեցող մասնագետներ ներգրավելու անհրաժեշտությամբ: Ցանկալի է տվյալ իրավապահ մարմնի կողմից աշխատավարձի չափի սահմանման նկատմամբ վերահսկողություն՝ բացառելու գործադիրի կողմից

¹³⁴Կոլումբոյի սկզբունքներ, կետեր 96-119:

¹³⁵Կոլումբոյի սկզբունքներ, կետ 108

¹³⁶Կոլումբոյի սկզբունքներ, կետ 109:

այդ հարցերի առնչությամբ հնարավոր միջամտությունը¹³⁷: Կարևոր է նաև այն, որ բյուջետային միջոցները բավարար լինեն աշխատակիցների կարողությունների զարգացման և ինստիտուտի ներքին բարելավման համար¹³⁸:

Որոշ իրավական համակարգերում հնարավորություն է տրվում նաև ներգրավելու արտաքին ֆինանսավորում՝ ի լրումն պետական բյուջեից ստացված միջոցների (օրինակ՝ միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերով ստացվող միջոցներ): Այսպիսի հնարավորության առկայության դեպքում կարևոր է, որ գործեն տվյալ ֆինանսավորման ծրագրերի հաստատման և վերահսկողության ընթացակարգեր՝ բացառելու շահերի բախման հնարավոր դեպքերը:

Ֆինանսական ինքնուրույնության տեսանկյունից նշանակալի է, որ Կոմիտեի ֆինանսավորման համար պետական բյուջեում առանձին բաժին է նախատեսվում, և Ազգային Ժողովում ամեն տարի անցկացվում է Կոմիտեի բյուջեի մասին տարեկան հաղորդման քննարկում: Այլ հարց է, թե որքանով են ռեսուրսների ապահովվածության տեսանկյունից վերհանված հարցերը հաշվի առնվում Ազգային Ժողովի կողմից հաջորդ տարվա բյուջետային հայտը հաստատելու համար:

Վերջապես, լիարժեք ֆինանսական ինքնուրույնությունը պայմանավորված է ոչ միայն բյուջետային առանձին ֆինանսավորմամբ, այլև հատկացված ֆինանսական միջոցները սեփական որոշմամբ տնօրինելու հնարավորությամբ՝ առանց Կառավարության լրացուցիչ թույլտվության ձեռքբերման պահանջի:¹³⁹

Նշենք նաև, որ միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից կազմվել են բյուջետային կառավարման սկզբունքներ, որոնք նպատակ են հետապնդում ուղորդելու պետությունների իրավասու մարմիններին՝ պետական բյուջեի հայտերի ձևավորման, դրանց քննարկման և ընդունման գործընթացում: Այդ սկզբունքներով կարևորվում են բյուջետային գործընթացի թափանցիկությունը, բյուջեի կազմման գործընթացում շահառու մարմինների, հանրության մասնակցությունը¹⁴⁰:

¹³⁷Կոմիտեի դեպքում այդ հարցերը որոշվում են Կառավարության որոշմամբ, հետևաբար գործադիրը ունի ազդեցություն:

¹³⁸Գոլմբրոյի սկզբունքներ, կետեր 104-106, 112:

¹³⁹Գոլմբրոյի սկզբունքներ, կետ 116:

¹⁴⁰ International Budget Partnership, Open Budget Survey 2019, key Findings

https://www.internationalbudget.org/sites/default/files/2020-04/2019_Key_Findings_EN.pdf; Տես նաև

https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/815102/police-funding-england-and-wales-2015-to-2020-hosb1019.pdf

Օրինակ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) պետությունների փորձի ուսումնասիրությունների արդյունքում վերհանել է արդյունավետ բյուջետային քաղաքականության օրինակներ, որոնց հիման վրա ձևավորել է բյուջետավորման հիմնարար սկզբունքներ: Դրանց շարքում են, ի թիվս այլնի, հետևյալ գործողությունները.

- ձևավորել բյուջետավորման այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան հասնելու ազգային զարգացման նպատակներին,
- բյուջետային հայտերը համապատասխանեցնել պետության միջնաժամկետ ծախսային նպատակներին, որի շրջանակներում պետք է վերանայվի առկա ծախսային քաղաքականությունը, ներառյալ՝ հարկային քաղաքականությունը,
- ապահովել, որ բյուջետային փաստաթղթերը լինեն բաց, թափանցիկ և հասանելի,
- բյուջետային որոշումները դնել հանրային քննարկումների՝ ապահովելով շահագրգիռ մարմինների/անձանց մասնակցությունը,
- վերհանել և գնահատել երկարաժամկետ ռիսկերը,
- բարձրացնել բյուջետային կանխատեսումների որակը և ճշգրտությունը, ապահովել ֆինանսական պլանների կազմում, անկախ աուդիտի իրականացում:¹⁴¹

Ինչ վերաբերում է իրավապահ մարմինների բյուջետավորմանը, ապա որպես դրա արդյունավետության բաղադրիչներ առանձնացվում են այնպիսիք, ինչպիսիք են հանցավորության և զբաղվածության մասին վիճակագրական տվյալների, բյուջեի և տվյալ մարմնի գործունեության արդյունավետության միջև կապի պատշաճ ուսումնասիրությունը, կենտրոնական բյուջետային մարմնին հիմնավորված հայտի ներկայացումը, ինչպես նաև ռազմավարական պլանավորումը:¹⁴² Այդ սկզբունքների համակարգում առանձնացվում է կարևորապես բյուջեի թափանցիկությունը: Այն սահմանվում է որպես ժամանակին և սիստեմատիկ կերպով ֆինանսական ամբողջ կարևոր տեղեկության բացահայտում:¹⁴³ Այդ տեղեկությունները պետք է ներառեն տարատեսակ տվյալներ, այդ թվում՝ տնտեսական կանխատեսումներ, ֆինանսական

¹⁴¹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, *Բյուջետային կառավարման վերաբերյալ առաջարկություններ*, Էջեր 5-10 (<https://www.oecd.org/gov/budgeting/Recommendation-of-the-Council-on-Budgetary-Governance.pdf>):

¹⁴² Police Budgeting: Winning Strategies, Public Administration Review, Vol. 61, No. 6 (Nov. - Dec., 2001),

¹⁴³ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, *Բյուջեի թափանցիկության վերաբերյալ ձեռնարկ* (2017), Էջ 29 <https://www.oecd-ilibrary.org/docserver/9789264282070-en.pdf?expires=1590656042&id=id&accname=guest&checksum=FB450EA296D923E29D18A51368B4B985>

ակտիվների և պարտավորությունների գնահատում: Ավելին, պետք է առկա լինեն հաշվապահական հստակ ռազմավարություններ, ներքին ստուգման/աուդիտի մեխանիզմներ, հասարակական և պառլամենտական վերահսկողության գործիքներ:

Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով Կոմիտեին՝ վերջինս՝ որպես ՀՀ պետական մարմին, որը ֆինանսավորում է ստանում պետական բյուջեից, ֆինանսական քաղաքականությունն իրականացնելիս և բյուջետային հայտեր կազմելիս պետք է առաջնորդվի ինչպես ազգային, այնպես էլ վերոնշյալ միջազգային սկզբունքներով: Կոմիտեի գործունեության ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ յուրաքանչյուր տարվա համար ֆինանսավորման հայտ ներկայացնելու և պետական բյուջեից հատկացումների միջոցով: ՔԿՕ 47-րդ հոդվածի համաձայն՝ Կոմիտեն բյուջետային հայտ է ներկայացնում Կառավարություն, որը վերջինս ընդունում և ընդգրկում է պետական բյուջեի նախագծում¹⁴⁴: Բացի հիմնական ֆոնդից Կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է նաև Կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով¹⁴⁵: Բյուջետային հայտերի կազմմանը վերաբերող հարցերն իրենց հերթին կարգավորվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումների և ուղեցույցների հիման վրա:

Բյուջետավորման գործընթացի կարգավորումները ՀՀ-ում և Կոմիտեի բյուջետավորումը

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային նախագծերի կազմման մոտեցումը: Այն արտացոլված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներում¹⁴⁶ (այսուհետ՝ մեթոդական ցուցումներ), որը նպատակ ունի օժանդակելու ՀՀ պետական իշխանության մարմիններին՝ իրենց 2019-2021 թվականների ՄԺԾՕ հայտերի և

¹⁴⁴Առարկությունների առկայության դեպքում Կառավարությունը ներկայացնում է դրանց վերաբերյալ հիմնավորումներ՝ դրանք ուղարկելով ՀՀ Ազգային ժողով և Կոմիտե:

¹⁴⁵Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով քննչական կոմիտեի քննիչների և քննչական կոմիտեի ղեկավարամետնտում ծառայողների աշխատավարձի միասնական ֆոնդի երկու տոկոսին: Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են քննչական կոմիտեի նախագահի որոշմամբ:

¹⁴⁶Մեթոդական ցուցումներ ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման, էջ 2:

բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման գործում:

Ծրագրային բյուջետավորման շրջանակներում իրականացվող միջոցառումների ցանկն ըստ պատասխանատու պետական մարմինների և ծրագրային դասակարգման դասիչների լրացուցիչ տրամադրվում է բոլոր հայտատու պետական մարմիններին: Ֆինանսների նախարարության կողմից մշակված՝ 2019-2021թթ. մեթոդական ցուցումները նախատեսում են բյուջետային հայտերին վերաբերող պայմանները: Այսպես, հայտերում ներառված ծրագրերի գծով պետք է ներկայացվեն պահանջվող ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ առանձին ծրագրերի՝ յուրաքանչյուր ծրագրի գծով ներկայացնելով ինչպես գոյություն ունեցող պարտավորությունների, այնպես էլ նոր նախաձեռնությունների վերաբերյալ հաշվարկներ և հիմնավորումներ:

Հայտերում պետք է ներկայացվեն գոյություն ունեցող պարտավորությունների, նոր նախաձեռնությունների վերաբերյալ տվյալներ, կոնկրետ ծրագրով ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծախսերը՝ ներկայացնելով նաև հիմնավորումներ:

Մեթոդական ցուցումների հիման վրա Ֆինանսների նախարարության կողմից ընդունվել է նաև «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ուղեցույց»¹⁴⁷ (այսուհետ՝ Ուղեցույց): Ուղեցույցը հիմնականում նախատեսված է բյուջեների պլանավորման փուլում բյուջետային ծրագրեր ծախսակազմման գործառույթների համար: Ընդհանուր առմամբ ծախսակազմման նպատակներն են. (1) պահանջվող ռեսուրսների գնահատումը, (2) արդյունքների/կատարողականի գնահատում, չափել և գնահատել տվյալ միջոցառման կատարողականը կամ արդյունքները, (3) գնագոյացում կամ ծառայությունների դիմաց վճարների սահմանումը, (4) ծրագրի/միջոցառումների իրականացման տարբերակների գնահատումը:¹⁴⁸

Պետք է նշել, որ և՛ մեթոդական ցուցումները, և՛ ուղեցույցը հավելվածների տեսքով սահմանում են հայտերի ներկայացման համար օրինակելի ձևաթղթեր,¹⁴⁹ որոնք

¹⁴⁷2017թ. օգոստոսի 1-ի՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե նախագահի հրաման N 142-Մ Ծախսակազմման ուղեցույցին հավանություն տալու մասին <http://www.scws.am/uploads/files/26/142-%D4%B1.pdf>

¹⁴⁸Ուղեցույց, կետ 29:

¹⁴⁹Պետք է նշել, որ Կոմիտեն բյուջետային հայտերն ուղարկում է՝ այդ ձևաթղթերի օրինակներով: Սակայն խնդիրն այն է, որ հիմնավորումների մասում հստակ չի ներկայացվում ուղեցույցով պահանջող այն ամբողջական

կիրառվում են Կոմիտեի կողմից: Կոմիտեում որպես բյուջետային ֆինանսավորման հայտի մշակման կանոնակարգ և մեթոդական ուղեցույց օգտագործվում են միայն Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված մեթոդական ցուցումները:¹⁵⁰

Կոմիտեի ամենամյա բյուջեն քննարկվում և հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Բյուջետային հայտերը և բյուջեի մասին տարեկան հաղորդումները հրապարակային են և հասանելի են հանրությանը: Այդ փաստաթղթերում ներկայացվում են Կոմիտեի կողմից իրականացվող այն ծրագրերը, որի համար պահանջվում է ֆինանսավորում, ծրագրի շրջանակներում իրականացվող և իրականացվելիք գործողությունները, անհրաժեշտ ֆինանսավորման չափը:

Որպես կանոն, Կոմիտեին առնչվող բյուջետային փաստաթղթերում նշվող գործողությունների շրջանակը հետևյալն է. (1) քննչական ծառայություններ, (2) քրեական գործերով վարույթի իրականացում, (3) վերապատրաստման և պատրաստման կազմակերպում, (4) կոմիտեի պահուստային ֆոնդ, (5) մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրում, (6) կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում, (7) տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում: Ներկայացվում են նաև ծախսերի խմբերը:¹⁵¹

Այսպես, կարևոր է այն հանգամանքը, թե Կոմիտեի կողմից ինչպես են կազմվում ֆինանսավորման հայտերը, մասնավորապես՝ ինչպիսի ուսումնասիրություն է կատարվում բյուջետային հայտի կազմման համար, ինչպես են գնահատվում կարիքները, վերհանվում այն խնդիրները, որոնք պայմանավորված են ֆինանսավորման և ռեսուրսների անբավարարությամբ: Կոմիտեն՝ իրեն ուղղված հարցմանն ի պատասխան՝ նշել է, որ բոլոր կարիքները գնահատվում են Կոմիտեի ստորաբաժանումների և քննիչների ներգրավմամբ հնարավոր տարատեսակ ձևաչափերով՝ բանավոր և գրավոր հարցումների, քննարկումների միջոցով: Նշվել է նաև, որ Կոմիտեի բյուջետավորման հայտի մշակման ժամանակահատվածում գրեթե

ինֆորմացիայի շրջանակը, ներառյալ՝ ծախսերի գնահատման համար հիմք հանդիսացող ենթադրությունների և հաշվարկների մասին տեղեկություն:

¹⁵⁰Կոմիտեին ուղղված հարցմանն ի պատասխան չի նշվել ներքին որևէ այլ մեթոդական ուղեցույցի մասին, նշվել է միայն, որ օգտագործվում են ֆինանսների նախարարության ուղեցույցները:

¹⁵¹http://investigative.am/images/2019/byuje/hayter_lramshakvac/havelvac_4.pdf

բոլոր շահագրգիռ ստորաբաժանումները ներկայացնում են համապատասխան տվյալներ և առաջարկություններ:¹⁵²

Տեխնիկական ապահովվածության վերաբերյալ կարիքների գնահատման առնչությամբ նշվել է, որ դա իրականացվում է այն մոտեցման հիման վրա, որ ամեն աշխատակից, որի գործունեությունը կապված է տեխնիկական միջոցների անհրաժեշտության հետ, պետք է ունենա աշխատանքային բավարար պայմաններ, կոմունիկացիաների հասանելիություն, բավարար ցանցային արագություն:¹⁵³ Առկա է նաև հնարավորություն տեխնիկական ապահովվածության վերաբերյալ հայտեր ներկայացնելու, և այն ստորաբաժանումները, որոնք կապված են տեխնիկական և ծրագրային ապահովման, շահագործման և հատուկ միջոցների սպասարկման հետ, ներկայացնում են տարեկան հայտեր, որոնք քննարկվում են:

Սակայն, ուսումնասիրության արդյունքում վերհանվել են մի շարք խնդիրներ, որոնք վկայում են հաստիքների թվի, նյութատեխնիկական ոչ հազեցվածության, աշխատանքային ոչ պատշաճ պայմանների առկայության մասին, ինչի հիմքում որոշ չափով ընկած է նաև կարիքների ոչ լիարժեք գնահատումը կամ առկա խնդիրների լուծման ուղղությամբ ոչ արդյունավետ միջոցների ձեռնարկումը: Մինչ խնդիրներին անդրադառնալը, դիտարկենք 2019թ., 2020թ. և 2021թ.¹⁵⁴ Կոմիտեին ֆինանսական հատկացումները և նկատվող մի շարք միտումներ: Այսպես, 2019թ. Կոմիտեին հատկացվել է 7738121,9 հազար դրամ¹⁵⁵ 2020թ.՝ 7647152,3,¹⁵⁶ իսկ 2021թ. նախատեսվել է 8377758,6 հազար դրամ բյուջետային հատկացում¹⁵⁷: Ինչպես տեսնում ենք, 2020թ. 2019թ.-ի համեմատ նվազել է, իսկ 2021թ.-ին 2020թ.-ի համեմատ Կոմիտեի բյուջեն ավելացել է մոտ 730,606,300 դրամով:

Բյուջեն ըստ տնտեսագիտական դասակարգման տարրերի	Հատկացումներ 2021 թվական/ հազ.դրամ	Հատկացումներ 2020 թվական/ հազ.դրամ
Աշխատողների աշխատավարձեր և պարգևատրումներ,	7254052,0	6745727,5

¹⁵² ՀՀ քննչական կոմիտեի կողմից Կազմակերպության հարցմանն ուղղված պատասխան առ 22 մայիսի 2020թ.:

¹⁵³ Նույն տեղում:

¹⁵⁴ 2020թ. և 2021թ. բյուջետային հատկացումները առավել մանրամասն ներկայացված են ստորև աղյուսակում:

¹⁵⁵ ՀՀ օրենքը 2019 թվականի «Պետական բյուջեի մասին»՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139475>:

¹⁵⁶ «2020 թվականի Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150329>:

¹⁵⁷ «2021 թվականի Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150538>:

դրամական խրախուսումներ, քաղաքացիական դատական և պետական ծառայողների պարգևատրում		
Էներգետիկ կապի, կոմունալ, ապահովագրական /մեքենաներ/ծառայությունների վճարումներ	261035,7	255796,8
Գույքի և սարքավորումների վարձակալություն	2,274.9	2,994.9
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	26684,0	26684,0
Վարչական, համակարգչային, տեղեկատվական, կառավարչական ծառայություններ և ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	141745,9	120504,0
Ներկայացուցչական ծախսեր	8000,0	8000,0
Այլ մասնագիտական ծառայություններ	4800,0	3600,0
Մեքենաների և սարքավորումների, ընթացիկ նորոգում և պահպանում	28800,0	28800,0
Գրասենյակային, տրանսպորտային, կենցաղային և հատուկ նպատակային այլ նյութեր	343300,8	216800,9
Այլ նպաստներ բյուջեից և պարտադիր վճարներ	155916,8	153435,8
Վերապատրաստման ծառայություններ	12102,0	17476,2
Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրների կրթաթոշակի տրամադրում	33334,5	42779,3
Վարչական սարքավորումներ	-	27547,8
ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդ	107986,9	101423.1
Ընդամենը	8377758,6	7647152,3

Բյուջետային տվյալների համաձայն՝ ֆինանսական հատկացումների գերակշիռ մասն ուղղված է աշխատողների աշխատավարձերին և հավելավճարներին, պարգևատրումներին, դրամական խրախուսումներին, քաղաքացիական դատական և պետական ծառայողների պարգևատրմանը (նշենք նաև, որ 2020թ.-ի համեմատ 2021թ. հատկացումների ավելացված 730,606,300 դրամից 508,324,500-ը ուղղված է հենց այս խումբ ծախսերին): Մասնավորապես 2021թ. նշված ծախսերի հատկացումները կազմել են ընդհանուր հատկացումների 86,5 տոկոսը, 2020թ.՝ 88,2, իսկ 2019թ.՝ 87 տոկոսը:

Նյութատեխնիկական հագեցվածություն. գործող մասնագետների պնդմամբ՝ քննիչների աշխատանքին առնչվող մի շարք խնդիրներ ծագում են նյութատեխնիկական ոչ պատշաճ հագեցվածության արդյունքում: Օրինակ, նշվել է, որ նույն սենյակում նստում են 2-3 քննիչներ, ինչի պայմաններում հարցաքննություն/առերեսում իրականացնելիս գործում չներգրավված քննիչը ստիպված է լինում դուրս գալ սենյակից և արդյունքում տուժում է վերջինիս ընթացիկ աշխատանքը, կա՛մ հնարավոր է, որ նույն գործին չներգրավված քննիչը կամ այլ գործով անցնող անձը տեղեկանա նախաքննական գաղտնիք հանդիսացող տեղեկության:¹⁵⁸ Նշվել է նաև գրասենյակային պայմաններին առնչվող խնդիրներ, մասնավորապես՝ այնպիսի իրավիճակներ, երբ քննիչներն աշխատում են նույն շենքում օպերատիվ հետախուզական գործողություն կատարող անձանց հետ,¹⁵⁹ կամ որ միևնույն շենքում քննիչների և ոստիկանության աշխատակիցների աշխատելու պատճառով լինում են իրավիճակներ, երբ առանձին գործողություն կատարվում է ոստիկանի կողմից, մինչդեռ այն պետք է կատարվեր քննիչների կողմից:¹⁶⁰

Խնդիրներ են արձանագրվել նաև նյութատեխնիկական ոչ պատշաճ ապահովվածության պատճառով քննչական գործողությունների կատարման անհնարինության, դրանց ոչ ժամանակին կատարման առնչությամբ: Արձանագրվել են դեպքեր, երբ քննիչը անձնական օգտագործման ավտոմեքենայի (որը փաստացի օգտագործվել է ծառայողական պարտականությունները կատարելու համար) անսարք լինելու պատճառով հնարավորություն չի ունեցել իրեղեն ապացույցը Երևան տեղափոխել և հանձնել փորձաքրեագիտական վարչություն, քննչական բաժնում ևս

¹⁵⁸ Հարցազրույց փորձագետի հետ:

¹⁵⁹ Հարցազրույց փորձագետի հետ:

¹⁶⁰ Հարցազրույց փաստաբանի հետ:

չեն կարողացել ժամանակին ապահովել ապացույցի տեղափոխումը:¹⁶¹ Մինչդեռ, քննիչների կողմից ծառայողական պարտականությունները կատարելու համար անձնական տրանսպորտային միջոցները օգտագործելու դեպքում անհրաժեշտ է պետական միջոցների հաշվին ապահովել դրանց սարքին վիճակում լինելը, տրամադրել վառելիք ձեռք բերելու միջոցներ և հոգալ դրանք սարքին պահելու հետ կապված ծախսերը:

Այս տեսանկյունից խնդրահարույց է, որ 2020թ. համեմատությամբ քննիչների թվի նախատեսված աճի պարագայում 2021թ. բյուջետային հատկացումներով փոփոխության չեն ենթարկվել մեքենաների և սարքավորումների, ընթացիկ նորոգման և պահպանման համար նախատեսված հատկացումները. այն երկու տարիներին դեպքում էլ կազմել է 28.800.000ՀՀ դրամ բյուջետային հատկացում,¹⁶² մինչդեռ անհրաժեշտ կլինեք քննիչների հաստիքների թվի ավելացմանը համապատասխան չափով ավելացնել նաև այդ նպատակով տրամադրվող հատկացումները: Մինևույն ժամանակ նշենք սակայն, որ 2020թ.-ի համեմատ 2021թ. ավելացվել են գրասենյակային, տրանսպորտային, կենցաղային և հատուկ նպատակային այլ նյութերի համար նախատեսված հատկացումները՝ 216.800.900 ՀՀ դրամից դառնալով 343.300.800 ՀՀ դրամ:

Հաստիքների թիվը. 2021թ. բյուջետային հայտի համաձայն՝ 2021-2023թթ. ընթացքում նախատեսվում է Կոմիտեի հաստիքների թվի ավելացում, ինչի արդյունքում թիվը 1038-ից կդառնա 1088 (ինչպես արդեն նշվել է, հաստիքների ավելացմանը զուգահեռ 2021թ. բյուջետային հատկացումներով աճել են նաև աշխատավարձերի համար նախատեսված հատկացումները): Այս փոփոխությունը կարող է լուծել առկա ծանրաբեռնվածության խնդիրը, ինչը բարձրաձայնվել է ինչպես փորձագետների, գործող իրավաբանների,¹⁶³ այնպես էլ Կոմիտեի կարգապահական վարույթների ընթացքում՝ որոշ դեպքերում անգամ դիտվելով որպես պատասխանատվությունը բացառող օբյեկտիվ հանգամանք: Սակայն պետք է նշել, որ հաստիքների ավելացումը վերաբերում է միայն Կոմիտեի քննիչների թվին, որը 686-ից դարձել է 736: Այս տեսանկյունից կարևոր է, թե ինչպես է Կոմիտեն գնահատել անհրաժեշտ

¹⁶¹ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 2016 թվականի որոշումների ժողովածու, ԿՀՈ-28:

¹⁶² Տե՛ս 2020 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի համար սահմանված բյուջետային հատկացումներ (https://www.investigative.am/news/view/byuje_2020.html), և 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի համար սահմանված բյուջետային հատկացումներ (https://www.investigative.am/news/view/byuje_2021.html):

¹⁶³ Հարցազրույց փորձագետի հետ:

հաստիքների թիվը, ինչու են ավելացվել միայն քննիչների հաստիքներն այն պարագայում, երբ բարձրաձայնվել են նաև Կոմիտեի առանձին բաժիններում ոչ քննիչների հաստիքներ զբաղեցնող անձանց ծանրաբեռնվածության մասին:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ նաև Կոմիտեում նախատեսվում են կառուցվածքային փոփոխություններ, այդ թվում՝ հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները և գործիքակազմը կփոխանցվի Հակակոռուպցիոն կոմիտեին¹⁶⁴:

Քննիչների և Կոմիտեի մասնագիտական ստորաբաժանումներում աշխատողների թվաքանակին անդրադարձել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը: Մասնավորապես, ՄԻՊ-ը արձանագրել է, որ միջպետական համագործակցության շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում կատարել թարգմանություններ և փաստաթղթեր կազմել այլ լեզուներով, սակայն ոչ բավարար թվով աշխատողներ են առկա համապատասխան բաժնում:¹⁶⁵ Նշվել է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել Կոմիտեի և քննչական մյուս մարմիններում քննիչների թվակազմը՝ գործերի քանակի համադրմամբ և ըստ անհրաժեշտության ավելացնել հաստիքներ կամ թափուր հաստիքների առկայության դեպքում՝ համալրել դրանք: Կոմիտեի մասնագիտացված ստորաբաժանման գերծանրաբեռնված ռեժիմը հանգեցնում է աշխատանքի ժամկետների ավելացման, որն էլ իր հերթին անխուսափելիորեն խնդիրներ է առաջացնում քրեական գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման՝ կոնվենցիոն պահանջի տեսանկյունից: Հետևաբար, ՄԻՊ-ը առաջարկություններ է ներկայացրել ավելացնելու միջազգային համագործակցության բաժնում աշխատողների թվաքանակը:¹⁶⁶

Նշենք, որ Կոմիտեի նախագահի կողմից պարզաբանվել է, որ ակնկալվում է ծանրաբեռնվածության խնդիրը լուծել նաև նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունման արդյունքում քրեական գործերի մի մասի, մասնավորապես՝

¹⁶⁴ՀՀ քննչական կոմիտեի նախագահի թիվ 97-Լ հրամանը՝ ՀՀ ՔԿ կողմից իրականացվող ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ռազմավարություններից բխող 2020-2023թթ. գործողությունների ցանկը հաստատելու մասին, 12.05.2020թ. <https://www.investigative.am/news/view/hraman-razmavarutyunic-bxox-gorcoxutyunner.html>

¹⁶⁵ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույց, 2018, էջ 311 (<https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>):

¹⁶⁶ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույց, 2018, էջ 311 (<https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>):

մասնավոր գանգատի գործերի՝ ոստիկանության համապատասխան բաժանմունքների կողմից քննությամբ, ինչի արդյունքում Կոմիտեի քննիչները այլևս չեն ծանրաբեռնվի այդ գործերով: Նշվել է նաև, որ ծանրաբեռնվածությունը կթեթևացնի համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումը, որը հնարավորություն կտա տեխնիկական լուծումների միջոցով արագացնել քննիչների աշխատանքը, օրինակ՝ ձայնագրել հարցաքննությունները, քանի որ քննիչների ժամանակի մեծ մասը հատկացվում է հարցաքննությունները ձեռագիր գրելուն կամ տպելուն:

Ամփոփիչ եզրահանգումներ

1. Կոմիտեի ձևավորման, ղեկավար կազմի նշանակման և Կոմիտեի ընտրության վերաբերյալ

Այսպես, թեև ՀՀ Քննչական կոմիտեն ստեղծվել է որպես քրեական գործերով քննություն իրականացնող անկախ մարմին, սակայն սույն վերլուծությամբ արձանագրվում են մի շարք հանգամանքներ, որոնք խնդիրներ կարող են առաջացնել որպես այդպիսին գործունեություն իրականացնելու առնչությամբ: Այդ հանգամանքների շարքում է առաջին հերթին Կոմիտեի ղեկավար կազմի նշանակումը, ինչը, ըստ ներկայիս կարգավորումների, իրականացվում է գործադիրի կողմից, իսկ ընթացակարգն այնպիսին է, որ չի երաշխավորում թեկնածուների, հատկապես Կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրման և ընտրված անձանց շրջանակից նշանակման ընթացակարգի թափանցիկություն, քանի որ պարզ չէ՝ ինչ սկզբունքով են ընտրվում և Կառավարության քննարկմանը ներկայացվում Կոմիտեի նախագահի թեկնածուները, թեկնածուների շրջանակից ինչպես է ընտրվում ամենահամապատասխան թեկնածուն և ինչ չափանիշներ են հաշվի առնվում ընտրություն կատարելու համար, ներառյալ՝ մասնագիտական կարողություններ և անձնական արժանիքներ:

Ինչ վերաբերում է Կոմիտեի քննիչների ընտրությանը, ուսումնասիրությունը վեր է հանել մի շարք խնդրահարույց հանգամանքներ: Առաջին, քննիչներին օրենքով ներկայացվող նվազագույն պահանջները չեն ներառում որոշակի աշխատանքային փորձ կամ իրավապահ այլ մարմիններում ծառայած լինելու անհրաժեշտություն: Երկրորդ, գործող կարգավորումներով չեն հստակեցվում, թե ինչ չափանիշների հիման վրա են ընտրվում և նշանակվում Կոմիտեի որակավորման հանձնաժողովի անդամները, և միակ կարգավորումն այն է, որ Կոմիտեի նախագահը ընտրում և նշանակում որակավորման հանձնաժողովի անդամների:

Ավելին, քննիչների ընտրության գործընթացում բացակայում են բարեվարքության ստուգման հստակ ընթացակարգեր և չափանիշներ: Միայն վերջերս ընտրության գործընթացում ներդրվել է հոգեբանական թեստավորումը:

Քննիչների ցուցակների համալրման նպատակով անցկացվող գրավոր քննության և հարցազրույցների առնչությամբ պետք է նշել, որ գրավոր քննությունը ենթադրում է քրեական իրավունքից, քրեական դատավարությունից և կրիմինալիստիկայից մեկական տեսական հարցերի շարադրանք, իսկ հարցազրույցների ընթացքում, պայմանավորված հարցաշարի բնույթով, հնարավորություն է ստեղծվում

պատկերացում կազմելու միայն անձի մասնագիտական պատրաստվածության աստիճանի մասին և չեն բացահայտում քննիչի թեկնածուի հոգեբանական, անձնական հատկանիշները:

Արդարադատության ակադեմիայում քննիչների ուսման առնչությամբ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա տևողությունը աստիճանաբար նվազեցվել է՝ 6 ամսից դառնալով 4 ամիս: Այս ժամանակահատվածը նաև ներառում է 3-ամսյա փորձաշրջանը, ինչը, սակայն, բավարար չէ անհրաժեշտ հմտություններ յուրացնելու համար:

Արդարադատության ակադեմիայում ուսման և փորձաշրջանի ավարտից հետո անցկացվում են գրավոր և բանավոր քննություններ, որոնց արդյունքում համալրվում է քննիչների թեկնածությունների ցուցակը: Սակայն, համալրումից հետո ցուցակից թափուր հաստիքներում քննիչների նշանակման համար սահմանված չեն որոշակի սկզբունքներ նշանակման հերթականության որոշման և չափանիշների առնչությամբ: Ընդհանուր առմամբ, սույն ուսումնասիրության արդյունքում կարելի է առանձնացնել հետևյալ եզրահանգումները. քննիչների ընտրության և նշանակման վերաբերյալ ՀՀ կարգավորումները ուղղված են մասնագիտական պատրաստվածության հիման վրա թեկնածուների ընտրությանը: Այս գործընթացում առկա են մի շարք խնդրահարույց հանգամանքներ, օրինակ՝ ընտրության ընթացքում ներգրավված հանձնաժողովների ձևավորման կարգը: Ավելին, հստակ չէ, թե սահմանված ուսումնական ծրագիրը և դրա հիման վրա գնահատման գործող կարգը ինչքանով են հնարավորություն ընձեռում բացի մասնագիտական գիտելիքներից և գործող իրավական կարգավորումներին տիրապետելուց գնահատելու նաև քննիչի աշխատանքի համար այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են, օրինակ, հաստատականությունը, տրամաբանական մտածողությունը, կազմակերպչական կարողությունները՝ հատկապես հաշվի առնելով այն, որ գնահատման չափանիշների վերաբերյալ առկա չեն հասանելի փաստաթղթեր:

2. Կոմիտեի հաշվետվողականության վերաբերյալ

Նշանակալի է, որ Կոմիտեի վերաբերյալ կարգավորումներով նախատեսվում են հաշվետվողականության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մեխանիզմներ: Ներքին մեխանիզմներից կարելի է նշել Կոմիտեում ներքին զեկուցումների, քննչական վերադասության, ներքին կարգապահական պատասխանատվության ընթացակարգերը: Ինչ վերաբերում է հաշվետվողականության արտաքին մեխանիզմներին, ապա որպես այդպիսիք՝ գործում են գործադիրի առջև անմիջական

հաշվետվողականություն՝ գործունեության մասին Կառավարությանը և յուրաքանչյուր տարի գրավոր հաղորդում ներկայացնելու միջոցով, օրենսդրի առջև հաշվետվողականությունը սահմանափակվում է միայն բյուջետային հայտերի հաստատման և բյուջեի կատարողականի քննարկման գործընթացներով և որոշ չափով Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում քննարկումներ անցկացնելու միջոցով:

Արտաքին հաշվետվողականության տարրեր են առկա նաև քրեադատավարական իրավահարաբերություններում դատախազական հսկողության և դատական վերահսկողության մեխանիզմներում, ինչպես նաև ՄԻՊ-ի կողմից պետական մարմինների դեմ պետական մարմինների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ բողոքների քննարկման, ուսումնասիրությունների իրականացման, ՄԻՊ-ի՝ Կոմիտեի քննիչների խնդրահարույց գործողությունների վերաբերյալ հրապարակային հայտարարությունների միջոցով:

3. Կոմիտեի գործունեության թափանցիկության վերաբերյալ

Կոմիտեի գործունեության թափանցիկությունը ապահովվում է (1) Կոմիտեի գործունեության մասին տարեկան հաղորդումների՝ Կոմիտեի կայքում հրապարակմամբ, (2) Կոմիտեի կայքի «Նորություններ» դաշտում քրեական գործերի մասին տեղեկության հրապարակմամբ, (3) Կոմիտեին ուղղված հարցումներին պատասխաններով, (4) Կոմիտեի բյուջետային հայտերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմամբ, ինչպես նաև բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողով տեղեկության ներկայացմամբ:

Սակայն ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ այս ընթացակարգերով ապահովվում է միայն հատվածական թափանցիկություն: Կոմիտեի տարեկան հաղորդումներով տրամադրվում է Կոմիտեի գործողության բոլոր ուղղությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, իսկ լրացուցիչ, առավել մանրամասն տեղեկություններ պետք է հնարավոր լինի ստանալ արդեն հարցումների միջոցով: Այլ խնդիր է, թե ինչպես է Կոմիտեն պատասխանում հարցումներին. արդյո՞ք լիարժեք տրամադրվում է հարցմամբ պահանջված տեղեկությունը: Նշենք, որ հետազոտության շրջանակում Կոմիտեին ուղղված մի շարք հարցումներին տրվել են ընդհանրական պատասխաններ, ինչի արդյունքում հնարավոր չի եղել ստանալ սպառիչ տեղեկություններ հարցերի վերաբերյալ:

Կոմիտեի կայքում հրապարակվող տեղեկությունների առնչությամբ ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք բազմազան են, սակայն հստակ չէ, թե ինչ սկզբունքներով է որոշվում այն քրեական գործերի շրջանակը, որոնց մասին Կոմիտեն նպատակահարմար է համարում տեղեկություն հրապարակել, դրանք վերաբերում են միայն դեպքերի և քրեական գործերի առանձին դրվագների, և գործերի մեծամասնության դեպքում տեղեկությունը սահմանափակվում է միայն այդպիսի առանձին հրապարակմամբ՝ առանց գործի վերաբերյալ հետագա թարմացումների:

4. Կոմիտեին անհրաժեշտ ռեսուրսների ներգրավման վերաբերյալ

Կոմիտեի գործունեության արդյունավետության համար առանցքային է դրա ֆինանսական ինքնուրույնությունը և գործունեության համար բավարար միջոցների ներգրավումը: Այս տեսանկյունից նշանակալի է, որ Կոմիտեի ֆինանսավորման համար պետական բյուջեում առանձին բաժին է նախատեսվում, և Ազգային ժողովում ամեն տարի անցկացվում է Կոմիտեի բյուջեի մասին տարեկան հաղորդման քննարկում: Սակայն, այլ հարց է, թե անգամ այս պայմաններում ինչպես են գնահատվում առկա կարիքները, և ինչպես է իրականացվում հատկացումների բաշխվածությունը:

Սույն ուսումնասիրությամբ վեր են հանվել մի շարք խնդիրներ՝ կապված հաստիքների թվի, նյութատեխնիկական ոչ բավարար հագեցվածության, աշխատանքային ոչ պատշաճ պայմանների առկայության մասին, ինչի հիմքում որոշ չափով ընկած է նաև կարիքների ոչ լիարժեք գնահատումը կամ առկա խնդիրների լուծման ուղղությամբ ոչ արդյունավետ միջոցների ձեռնարկումը: Նշենք, որ Կոմիտեի ներկայացուցիչների հետ հանդիպումներ անցկացնելու անհնարինությամբ պայմանավորված՝ այս հարցերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ հնարավոր չի եղել ձեռք բերել, քան Կոմիտեին ուղղված գրավոր հարցմամբ ստացված տեղեկությունն առ այն, որ բոլոր կարիքները գնահատվում են Կոմիտեի ստորաբաժանումների և քննիչների ներգրավմամբ հնարավոր տարատեսակ ձևաչափերով՝ բանավոր և գրավոր հարցումների, քննարկումների միջոցով, և որ գրեթե բոլոր շահագրգիռ ստորաբաժանումները ներկայացնում են համապատասխան տվյալներ և առաջարկություններ:

Առաջարկություններ

1. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի պաշտոնի թեկնածուների համար սահմանել հստակ չափանիշներ (ոլորտային մասնագիտական ստաժի և աշխատանքային փորձի նվազագույն ժամկետ, գիտական աստիճանի առկայություն, մասնագիտական կարողությունների և անձնական արժանիքների հստակ պահանջներ և այլն):
2. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի ընտրությունն իրականացնել մրցութային կարգով՝ մրցութային հանձնաժողովի միջոցով և Ազգային ժողովի կողմից Կոմիտեի նախագահի թեկնածուի ընտրությամբ՝ ապահովելով Ազգային ժողովում քաղաքական ընդդիմության ձայների որոշիչ ներգրավվածությունը:
3. Գործադիր իշխանության մարմնի կողմից ՀՀ քննչական կոմիտեի նախագահի ընտրության և նշանակման կարգի պահպանման դեպքում ապահովել ընտրության մրցութային կարգը և թափանցիկությունը՝ Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի որոշիչ և արդյունավետ մասնակցությամբ, ինչպես նաև Ազգային ժողովի նկատմամբ Կոմիտեի հաշվետվողականության հստակ մեխանիզմների ներդրմամբ:
4. Կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածուների հավակնորդների գիտելիքների գնահատման և նրանց կողմից քրեաիրավական և քրեադատավարական և այլ հարցերի գիտելիքների գնահատման համար ներկայացնել այնպիսի առաջադրանքներ, որոնք հնարավորություն կտան ստուգելու ոչ միայն ապագա քննիչների մասնագիտական գիտելիքները, այլև վերլուծելու, պատճառաբանելու կարողությունները, մտածողությունը և այլն:
5. Արդարադատության ակադեմիայում հավակնորդների կողմից ուսումնառություն չանցնելու հնարավոր հանգամանքներում բացառել քրեական և քրեադատավարական ոլորտից դուրս գիտական աստիճան և մասնագիտական ստաժ ունենալու հնարավորությունը և բոլոր դեպքերում այդ խումբ հավակնորդների համար նախատեսել առնվազն պարտադիր փորձաշրջան՝ իրենց անհատական ծրագրով:
6. Սահմանել Կոմիտեի Որակավորման հանձնաժողովի անդամների՝ քննիչների և իրավաբան-գիտնականների ընտրության չափանիշներ և ընտրության թափանցիկ կարգ, և ամրագրել գործունեության անկախության և անաչառության երաշխիքներ:

7. Սահմանել Կոմիտեի Որակավորման հանձնաժողովի կողմից գրավոր քննության արդյունքների գնահատման չափանիշներ և գնահատականի հիմնավորման պահանջ: Ապահովել գնահատման չափանիշների և կարգի հրապարակայնությունը:
8. Քննիչների ընտրության գործընթացում ներդնել բարեվարքության ստուգում:
9. Սահմանել արդարադատության ակադեմիայի գնահատման հանձնաժողովի անդամների, այդ թվում՝ քննիչների և մասնագետների ընտրության չափանիշներ, ընտրության և նշանակման թափանցիկ կարգ: Սահմանել հանձնաժողովի անդամների անկախության և անաչառության երաշխիքներ:
10. Սահմանել Արդարադատության ակադեմիայում քննիչների թեկնածուների ուսուցման և փորձաշրջանի ավելի երկար տևողություն՝ ապահովելով քննիչների թեկնածուների պատրաստվածության առավել բարձր մակարդակ:
11. Սահմանել փորձաշրջանի ղեկավարի ընտրության չափանիշներ, այդ թվում՝ որոշակի մասնագիտական աշխատանքային ստաժ, պաշտոնի աստիճան և այլն, նրա կողմից փորձաշրջանի կազմակերպման և ղեկավարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ:
12. Նախատեսել Ազգային ժողովի առջև Կոմիտեի անմիջական հաշվետվողականության պահանջ Կոմիտեի ընդհանուր գործունեության կապակցությամբ, օրինակ՝ յուրաքանչյուր տարի Կոմիտեի գործունեության մասին տարեկան հաղորդում ներկայացնելու պահանջ սահմանելով:
13. Օրենքով սահմանել ընթացակարգեր Կոմիտեի տարեկան հաղորդման քննարկման, հաստատման և դրանում առկա խնդիրների վերլուծության և լուծման համար, այդ թվում՝ ինչպես Կառավարության, այնպես էլ Ազգային ժողովի կողմից:
14. Օրենքով սահմանել քննիչների թեկնածուներին պաշտոնի նշանակման հստակ կարգ, չափանիշները և առաջնահերթությունները՝ բացառելու այս հարցում պաշտոնի նշանակող պաշտոնատար անձի լայն հայեցողությունը:
15. Կոմիտեում լրացման ենթակա հաստիքների թիվը որոշելիս հաշվի առնել քննիչների ծանրաբեռնվածությունը ըստ ստորաբաժանումների:
16. Նախատեսել ոչ միայն քննիչների, այլև Կոմիտեի մասնագիտական այլ ստորաբաժանումների համար բավարար հաստիքներ (օրինակ՝ թարգմանիչներ):
17. Հաստիքների թվի աճին համապատասխան ավելացնել նաև նյութատեխնիկական ապահովվածությանն առնչվող հատկացումները, ներառյալ՝ մեքենաների և սարքավորումների, ընթացիկ նորոգման և պահպանման համար նախատեսված հատկացումները:

18. Յուրաքանչյուր քննիչի ապահովել առանձին աշխատասենյակով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ապահովել հարցաքննության և քննչական այլ գործողությունների կատարման համար անհրաժեշտ առանձին սենյակներով: